



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

Կազմվեց՝

ԱՄՆ ՄՁԳ Հայաստան,
Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման
ծրագրի համար

Կազմողներ՝

Անի Դալլաքյան և Նարինե Հակոբյան
Հետազոտության մասնակիցներ
Քաղաքականության վերլուծության Թուրփանջյան կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան

Լուսիկ Դանիելյան
Քաղաքականության վերլուծության Թուրփանջյան կենտրոնի տնօրեն
Հայաստանի ամերիկյան համալսարան

Երևան

Նոյեմբեր, 2008թ.

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) ՄՊՀՀ ծրագրի վերանայման համար: Այն կազմվել է ՀԱՀ Քաղաքականության վերլուծության Թուրփանջյան կենտրոնի կողմից: Հեղինակի կողմից արտահայտված տեսակետները հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Բովանդակություն

Հիմնական փաստերի ամփոփում	4
Նախապատմություն	8
Մեթոդաբանություն	8
Հայտնաբերված փաստեր.....	9
Գործող կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը և վերաբերմունքը դրա հանդեպ.....	10
<i>Ասոցիացիաները «կենսաթոշակ» բառի հետ</i>	<i>10</i>
<i>Տեղեկացվածությունը Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի մասին.....</i>	<i>11</i>
<i>Գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը</i>	<i>11</i>
<i>Գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը. Գործատուներ</i>	<i>12</i>
<i>Գործող կենսաթոշակային համակարգի արդարացիությունը</i>	<i>13</i>
<i>Գործող կենսաթոշակային համակարգի արդարացիությունը. Գործատուներ</i>	<i>13</i>
<i>Գործող կենսաթոշակային համակարգի արդարացիությունը. Աշխատողներ</i>	<i>14</i>
<i>Վերջին ժամանակների կենսաթոշակների բարձրացումը Հայաստանում.....</i>	<i>14</i>
Վերաբերմունքը կենսաթոշակային համակարգի առաջարկված բարեփոխումների նկատմամբ	14
<i>Հայաստանում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների թեր և դեմ փաստարկները</i>	<i>15</i>
<i>Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ թեր և դեմ կարծիքներ. Աշխատողներ</i>	<i>16</i>
<i>Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ թեր և դեմ կարծիքներ. Գործատուներ.....</i>	<i>17</i>
<i>Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների արդյունավետությունը.....</i>	<i>18</i>
<i>Կենսաթոշակային բարեփոխումներն իրականացնելու կառավարության ժամանակացույցը.....</i>	<i>19</i>
Մասնակիցների վերաբերմունքը կենսաթոշակային ընտրված հարցերի նկատմամբ.....	21
<i>Տարբեր տարիքային խմբերին առնչվող մոտեցումների արդարացիությունը</i>	<i>21</i>
<i>Խոցելի բնակչությանը կենսաթոշակի կամ նպաստների տրամադրումը.....</i>	<i>21</i>
<i>Չգրանցված աշխատողներին ֆորմալ հատված բերելու խթանները.....</i>	<i>22</i>
<i>Չգրանցված աշխատողներին ֆորմալ հատված բերելու խթաններ. Աշխատողներ</i>	<i>23</i>
<i>Չգրանցված աշխատողներին ֆորմալ հատված բերելու խթաններ. Գործատուներ</i>	<i>24</i>
<i>Դիմադրություն ֆորմալ դաշտում աշխատելուն</i>	<i>25</i>

Մասնակիցների վերաբերմունքը սոցիալական ապահովագրություն	
տրամադրելու պատասխանատվության հարցի նկատմամբ	26
<i>Կենսաթոշակի անցնելուց հետո համարժեք եկամտի ապահովումը.....</i>	<i>26</i>
<i>Ապահով կենսաթոշակային տարիքի համար ամենամեծ պատասխանատվություն</i>	
<i>կրողը.....</i>	<i>27</i>
Վերաբերմունքը կենսաթոշակային տարիքի համար խնայողություններ	
կատարելու նկատմամբ	28
<i>Ֆինանսական պլանավորումը կենսաթոշակային տարիքի համար.....</i>	<i>28</i>
<i>Կենսաթոշակային տարիքի համար խնայողությունների հնարավոր</i>	
<i>տարբերակները</i>	<i>28</i>
<i>Կենսաթոշակային տարիքի համար խնայողությունների լավագույն</i>	
<i>եղանակները.....</i>	<i>29</i>
Խնայողությունները պահելու նպատակով տարբեր հաստատությունների	
նկատմամբ վստահությունը	29
<i>Պետական կամ մասնավոր հատվածը կենսաթոշակային խնայողությունները</i>	
<i>ներդնելու համար</i>	<i>29</i>
<i>Հայաստանի բանկերի նկատմամբ վստահությունը խնայողությունները ներդնելու</i>	
<i>համար.....</i>	<i>31</i>
<i>Հայաստանի ապահովագրական ընկերությունների նկատմամբ վստահությունը</i>	
<i>խնայողությունները ներդնելու համար</i>	<i>32</i>
<i>Կենսաթոշակային խնայողությունների ներդրումը տեղական կամ միջազգային</i>	
<i>ֆինանսական հաստատություններում</i>	<i>33</i>
Վերաբերմունքը կենսաթոշակային ներդրումների հետ կապված ռիսկի	
նկատմամբ.....	34
<i>Կենսաթոշակային խնայողությունները.....</i>	<i>34</i>
<i>Կառավարության կողմից կենսաթոշակային խնայողությունների ներդրումը</i>	<i>34</i>
<i>Կենսաթոշակային միջոցների ներդրումը իրականացնող մասնավոր ֆինանսական</i>	
<i>հաստատություններ</i>	<i>35</i>
<i>Կենսաթոշակային միջոցների ներդրումից ստացվող եկամուտը.....</i>	<i>36</i>
Վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների հանրային իրազեկման	
արշավի նկատմամբ	36
<i>Կենսաթոշակային բարեփոխումների իրազեկման համար օգտագործվող</i>	
<i>տեղեկատվության աղբյուրները.....</i>	<i>36</i>
<i>Վստահությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների մասին</i>	
<i>տեղեկատվության նկատմամբ</i>	<i>37</i>
<i>Հանրային իրազեկման արշավի կարգախոսները</i>	<i>38</i>

Հիմնական փաստերի ամփոփում

Գործող կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը և վերաբերմունքը դրա հանդեպ

- «Կենսաթոշակ» ասելով մարդիկ հիմնականում պատկերացնում են այն փոխհատուցումը, որը կենսաթոշակի անցնելիս ստանում են իրենց կյանքի ընթացքում կատարած աշխատանքի դիմաց:
- Բոլորը համաձայն են, որ ներկա կենսաթոշակների չափն ամենևին բավարար չէ և պետք է այն բարձրացնել կենսաթոշակառուների առօրյա կարիքները բավարարելու համար:
- Քչերն են պատկերացնում, թե ինչպես է կենսաթոշակային համակարգը գործում Հայաստանում:
- Գրեթե բոլորը բողոքում են, որ գործող կենսաթոշակային համակարգը արդյունավետ չէ, և կենսաթոշակառուների կենսամակարդակը ցածր է ցածր կենսաթոշակների պատճառով:
- Մարդկանց մեծ մասը հավատում է, որ գործող կենսաթոշակային համակարգը անարդարացի է:
- Գործատուները համարում են, որ աշխատողները չեն ցանկանում աշխատել ֆորմալ հատվածում ավելի շատ աշխատավարձ տուն տանելու համար, մինչդեռ աշխատողները համարում են, որ գործատուները չեն ցանկանում կնքել աշխատանքային պայմանագրեր աշխատողների հետ պետությանն ապահովագրական վճարումներ չկատարելու համար:
- Գրեթե բոլորը տեղյակ են Հայաստանում վերջին ժամանակներում կենսաթոշակների բարձրացման մասին, սակայն մարդկանց մեծ մասը նշում է, որ այդ բարձրացումները չեն բարելավում կենսաթոշակառուների կենսամակարդակը:

Վերաբերմունքն առաջարկվող կենսաթոշակային համակարգի բարեփոխումների նկատմամբ

- Մարդկանց մեծ մասը տեղյակ չէ կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված առաջիկա փոփոխություններին:
- Գրեթե բոլորը համաձայն են, որ կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ժամանակ կառավարությունը պետք է տրամադրի մանրամասն և հստակ բացատրություններ:
- Մարդիկ հիմնականում դեմ են հարկերի բարձրացմանը, քանի որ դա կազդի զուտ աշխատավարձի չափի վրա, հատկապես ցածր աշխատավարձ ունեցողների դեպքում:
- Գրեթե բոլորը ցանկանում են պետությունից ստանալ երաշխիքներ կենսաթոշակային համակարգի իրականացման գործընթացում:

- Որոշ մարդիկ դեմ են խնայողական հաշիվներին, քանի որ Խորհրդային Միության անկումից հետո շատերը կորցրեցին իրենց խնայողությունները:
- Մի փոքր խումբ աշխատողների դուր եկավ այն միտքը, որ իրենք պետք է որոշեն ինչպես կառավարել և ուր ներդնել իրենց կենսաթոշակային խնայողությունները:
- Բարձրաձայնվում էր որոշ չափով ընդհանուր հարց, թե արդյոք պետությունն ունի կենսաթոշակային խնայողություններն արդյունավետորեն վարելու համար անհրաժեշտ ֆինանսական կարողությունը: Պետության նկատմամբ վստահության բացակայությունն առանձնացվել է որպես կենսաթոշակային բարեփոխումներն արդյունավետ իրականացնելու ճանապարհին մեկ այլ հիմնական արգելք:
- Մարդկանց մեծ մասը համարում է, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները պետք է իրականացնել աստիճանաբար և փուլերով՝ մարդկանց նախապատրաստելու և փոփոխությունների մասին նրանց տեղեկացնելու նպատակով:

Վերաբերմունքն ընտրված կենսաթոշակային հարցերի նկատմամբ

- Մարդկանց մեծ մասը հայտարարել է, որ տարբեր տարիքային խմբերի համար կենսաթոշակների նկատմամբ տարբեր մոտեցումների կիրառումն արդարացի չէ, և այդպիսի վերաբերմունքի հիմնական բացատրությունն այն է, որ մարդիկ չեն պատկերացնում, թե որն է այդ տարբերությունների առաջացման պատճառը:
- Բոլորը համաձայն են, որ խոցելի խմբերին, այն է՝ փոքր երեխաներ ունեցող ծնողները, հաշմանդամություն ունեցող անձինք կամ պաշտոնապես գործազուրկ համարվողները, պետք է տրամադրվի կենսաթոշակ կամ նպաստ:
- Գրեթե բոլորը համարում են, որ չգրանցված աշխատողներին շահագրգռելու դեպքում նրանք կաշխատեն ֆորմալ հատվածում. այդ աշխատողները նախ և առաջ պետք է հասկանան, որ աշխատավարձերն ուղղակիորեն կապված են կենսաթոշակների հետ և եթե նրանք այսօր հարկ չեն վճարում, վաղը կենսաթոշակ չեն ստանա և երկրորդ, պետք է ստիպել և հսկել գործատուներին, որպեսզի վերջիններիս աշխատողները ներառվեն ֆորմալ հատվածում:
- Ոչ ֆորմալ հատվածում աշխատողները չեն դիմադրում առանց գրանցվելու աշխատելուն, որովհետև վախենում են կորցնել իրենց աշխատանքը:

Վերաբերմունքը սոցիալական ապահովագրության տրամադրման պատասխանատվության նկատմամբ

- Գրեթե բոլորը համաձայն են, որ պետությունը, անհատները, գործատուները և ընտանիքը միասին պետք է ներգրավվեն կենսաթոշակի անցնելիս համարժեք եկամուտ ունենալն ապահովելու գործում:
- Գրեթե բոլորը համարում են, որ պետությունը պետք է կրի կենսաթոշակով ապահովելու պատասխանատվության մեծ մասը:
- Նոր կենսաթոշակային համակարգում անհատների դերը համարվում է որպես կարևոր:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

Վերաբերմունքը կենսաթոշակային խնայողությունների տարբերակների նկատմամբ

- Շատ քչերը են նշել կենսաթոշակի համար ֆինանսական պլանավորման գործում ներկայումս ներգրավված լինելու մասին:
- Կենսաթոշակի համար ֆինանսական պլանավորման հարցում մի կարևոր արգելք է, հատկապես ցածր աշխատավարձ ստացողների համար, այն հանգամանքի ընդունումը, որ նրանք այնքան քիչ գումար են կարող խնայել, որ դա գրեթե անհնաստ է դառնում:
- Մարդկանց մեծ մասն ավելի երկար է աշխատում կենսաթոշակի անցնելիս ապրուստի միջոցներ ունենալու համար:

Վստահությունը խնայողությունների ներդրմամբ զբաղվող տարբեր հաստատությունների հանդեպ

- Կարծիքներն այն հարցի շուրջ, թե ո՞ւմ կվստահեն կենսաթոշակային խնայողությունների ներդրման հարցում՝ պետությա՞նը, թե՞ մասնավոր հատվածին, տարբերվում են ըստ ֆոկուս խմբերի, որոնցում ընդգրկված քաղաքաբնակ մասնակիցները չեն վստահում ոչ մեկին, իսկ գյուղաբնակ մասնակիցները վստահում են միայն պետությանը:
- Մարդկանց մեծ մասը համարում է, որ բանկերն ավելի վստահելի են, քան ապահովագրական ընկերությունները:
- Թվում է, թե քաղաքաբնակները գնալով ավելի են վստահում բանկերին:
- Մարդիկ չեն համարում, որ Հայաստանում ապահովագրական ընկերություններին կարելի է վստահել: Ավելին, շատ քչերն են տեղյակ Հայաստանում գործող որևէ ապահովագրական ընկերության մասին:
- Մարդկանց մեծ մասը համաձայն է, որ միջազգային ֆինանսական հաստատություններն ավելի ապահով են, քան տեղական հաստատությունները:

Վերաբերմունքը կենսաթոշակային ներդրումների առաջ բերած ռիսկի նկատմամբ

- Մարդկանց մեծ մասը ողջունում է կենսաթոշակային խնայողությունների գաղափարը:
- Թեև որոշ մարդիկ կենսաթոշակային խնայողությունների ներդրման գործում պետության ներգրավվածությունը դիտարկում են հուսադրող, մյուսներն ունեն մի շարք մտահոգություններ՝ կապված պետության նկատմամբ վստահության բացակայության հետ:
- Մարդկանց մեծ մասն ունի ուժեղ համոզմունք, որ կենսաթոշակային խնայողությունների ներդրման գործը մասնավոր ֆինանսական հաստատություններին թողնելը ռիսկ է պարունակում:

- Մարդկանց մեծ մասը նախընտրում է կենսաթոշակային խնայողությունների ավելի ցածր, սակայն երաշխավորված և կայուն հատուցադրույք, մինչդեռ երիտասարդները նախընտրում են ավելի բարձր հատուցադրույք անգամ ավելի մեծ ռիսկի գնով:

Վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային իրազեկման քարոզարշավի նկատմամբ

- Մարդկանց մեծ մասը կենսաթոշակային հարցերի մասին տեղեկությունների իր հիմնական աղբյուրը համարում է հեռուստատեսությունը:
- Ընդհանրապես ընդունվում է, որ պետությունն ինքը պետք է ներկայացնի նոր կենսաթոշակային համակարգը հասարակությանը լավ կազմակերպված քարոզարշավի միջոցով, և պետական աշխատողները և՛ կենտրոնական մարմնում, և՛ տարածքային կենտրոններում պետք է իրենք լավատեղյակ լինեն նախքան ծրագրի տարածումը երկրում:
- Կարգախոսներ մշակելիս անհրաժեշտ է խուսափել ֆոկլուս խմբի մասնակիցների կողմից գործածված մի շարք բառերից և արտահայտություններից, ինչպիսիք են «ծերություն», «արժանապատվություն», «հետո ապրել», «վայելել ծերությունը», «երիտասարդ տարիքում որոշումներ», «երջանիկ ծերություն», «բարեկեցիկ» և «սկիզբ» բառերն ու արտահայտությունները: Մարդկանց մեծ մասը չի կարող խնայողություններ ունենալ, որի պատճառով «խնայողություն» բառը շարունակ մերժվում էր:
- Մարդկանց դուր եկան այնպիսի բառեր, ինչպես օրինակ՝ «որոշումներ», «ապահով» և «վստահելի» բառերը:

Նախապատմություն

ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող «Սըրվիսիզ գոուփ, ինք.» կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տեխնիկական աջակցություն «Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ)» ծրագրի միջոցով: ՍՊՀՀ ծրագիրը հնգամյա ծրագիր է՝ ուղղված Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգերի կատարելագործմանը և, միևնույն ժամանակ, բնակչության ինքնավստահության մեծացման ու հիմնական կարիքների բավարարման հարցում պետությունից կախվածության նվազեցման հնարավորությունների ընձեռմանը: ՍՊՀՀ նպատակաուղղված է սոցիալական պաշտպանության չորս գլխավոր ոլորտներին՝ սոցիալական ապահովագրություն, զբաղվածության ծառայություններ, մասնագիտական անվտանգություն ու Աշխատանքային օրենսգիրք և սոցիալական աջակցության ծրագրեր բնակչության խոցելի խմբերի համար: «Սըրվիսիզ գոուփ, ինք.» կազմակերպությունը դիմել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) «Քաղաքականության վերլուծության Թուրփանջյան կենտրոնին» (ՔՎԹԿ)՝ մասնակցելու ՍՊՀՀ հետազոտական աշխատանքներին:

Այս հաշվետվությամբ ներկայացվում են «Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում ՔՎԹԿ/ՀԱՀ իրականացրած աշխատանքի, այն է՝ իրականացնել մի շարք առանձին ֆոկուս խմբեր քաղաքաբնակ ու գյուղաբնակ բնակչության և գործատուների ու աշխատողների հետ կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների վերաբերյալ բնակչության տեղեկացվածությունը և տնտեսական անցման ու աճող մասնավորեցման ընթացքում սոցիալական ապահովագրության նկատմամբ նրանց վերաբերմունքը չափելու նպատակով, արդյունքում հայտնաբերված փաստերը:

Մեթոդաբանություն

2008թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում անցկացվեց ութ ֆոկուս խումբ՝ հավաքելու տեղեկություններ կենսաթոշակային համակարգի մասին իրազեկության, սոցիալական ապահովագրության տրամադրման համար պատասխանատվության հանդեպ վերաբերմունքի և կենսաթոշակային խնայողությունների ներդրման առումով տարբեր հաստատությունների նկատմամբ վստահության վերաբերյալ: Տվյալները հավաքագրվել են չորս նպատակային խմբերի հետ քննարկումների ընթացքում՝ 1) քաղաքաբնակներ, 2) գյուղաբնակներ, 3) աշխատողներ և 4) գործատուներ: Յուրաքանչյուր նպատակային խմբի հետ իրականացվել է երկու ֆոկուս խումբ ընդհանուր առմամբ ութ հանդիպման ընթացքում:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՍՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

Աշխատողների և գործատուների հետ ֆոկուս խմբերն իրականացվել են Երևանում: Բոլոր մասնակիցներն ընտրվել են ըստ ֆոկուս խմբերի քննարկումներին մասնակցելու հնարավորության և պատրաստակամության: Քաղաքային և գյուղական բնակավայրերում ֆոկուս խմբերի համար ապահովվել է տարբեր սեռեր, տարիք, կրթական մակարդակ և զբաղվածության կարգավիճակ ունեցող մասնակիցների ներկայությունը: Աշխատողների և գործատուների հետ ֆոկուս խմբերի քննարկումների ժամանակ ներգրավվել են և՛ զրանցված, և՛ չզրանցված մասնակիցներ: Մասնակցության համար կապ է հաստատվել ֆորմալ և ոչ ֆորմալ հատվածներում աշխատող մոտ 50 աշխատողների և մոտ 200 գործատուների հետ: Ֆոկուս խմբերի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են քննարկման թեմայի մասին: Ֆոկուս խմբի քննարկումների միջին տևողությունը կազմել է 180-ից 200 րոպե:¹

Կենսաթոշակային աշխատանքային խմբի (ԿԱԽ) և ՍՊՀՀ հետ խորհրդակցության արդյունքում մշակվել է ֆոկուս խմբերի քննարկման ուղեցույց: Ֆոկուս խմբերի քննարկումները եղել են հետևյալ թեմաների շուրջ՝ 1) գործող կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը և դրա հանդեպ վերաբերմունքը, 2) վերաբերմունքը կենսաթոշակային համակարգի առաջարկվող բարեփոխումների նկատմամբ, 3) վերաբերմունքը տարբեր կենսաթոշակային հարցերի նկատմամբ, 4) վերաբերմունքը սոցիալական ապահովագրության տրամադրման համար պատասխանատվության նկատմամբ, 5) վերաբերմունքը կենսաթոշակային խնայողությունների տարբերակների նկատմամբ 6) վստահությունը խնայողությունների ներդրմամբ զբաղվող տարբեր հաստատությունների հանդեպ 7) վերաբերմունքը կենսաթոշակային դրամամիջոցների առաջ բերած ռիսկի նկատմամբ և 8) վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային տեղեկացման քարոզարշավի նկատմամբ:

Հայտնաբերված փաստեր

Այս բաժնում ներկայացված են փաստեր՝ հիմնված քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակիչներից, աշխատողներից և գործատուներից հավաքագրված տվյալների վրա, որոնք բաղկացած են ութ մասից՝ 1) գործող կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը և դրա հանդեպ վերաբերմունքը, 2) վերաբերմունքը կենսաթոշակային համակարգի առաջարկվող բարեփոխումների վ նկատմամբ, 3) վերաբերմունքը տարբեր կենսաթոշակային հարցերի նկատմամբ, 4) վերաբերմունքը սոցիալական ապահովագրության տրամադրման համար պատասխանատվության նկատմամբ, 5) վերաբերմունքը կենսաթոշակային խնայողությունների տարբերակների նկատմամբ 6) վստահությունը խնայողությունների ներդրմամբ զբաղվող տարբեր հաստատությունների հանդեպ 7) վերաբերմունքը

¹ Հանդիպումները ձայնագրվել են: Ուրից-տասնհինգ մարդ մասնակցել են Երևանից դուրս քաղաքաբակ և գյուղաբնակ բնակիչների համար անցկացված ֆոկուս խմբերի հանդիպումներին: Աշխատողների ֆոկուս խմբերից յուրաքանչյուրն ունեցել է չորսից-ինն մասնակից, իսկ գործատուների համար յուրաքանչյուր ֆոկուս խումբ ունեցել է չորսից- հինգ մասնակից:

ԹՎՏԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՍԶԳ/ՍՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

կենսաթոշակային դրամամիջոցների առաջ բերած ռիսկի նկատմամբ և 8) վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային տեղեկացման քարոզարշավի նկատմամբ: Մասնակիցներից որպես օրինակ բերված որոշ մեջբերումներ դրվել են մզացված վանդակներում: Քաղաքաբնակների ու գյուղաբնակների և աշխատողների ու գործատուների միջև լուրջ տարբերությունները բերվել են վերլուծության բաժնում: Աշխատողների կամ գործատուների կարծիքները քննարկվել են առանձին, եթե էականորեն տարբերվել են այլ նպատակային խմբերի կարծիքներից:

Գործող կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը և վերաբերմունքը դրա հանդեպ

Ֆոկուս խմբի մասնակիցներին հարց է տրվել «կենսաթոշակ» բառի հետ նրանց ասոցիացիաների, գործող կենսաթոշակային համակարգի մասին նրանց տեղեկացվածության և այդ համակարգի արդյունավետության ու արդարացիության մասին:

Ասոցիացիաները «կենսաթոշակ» բառի հետ

Պատասխանելով այն հարցին, թե ինչ են պատկերացնում կենսաթոշակի մասին մտածելիս, ֆոկուս խմբի մասնակիցները նշել են Հայաստանում գործող կենսաթոշակների տարբեր տեսակները՝ տարիքային, ուսանողական, հաշմանդամության, իսկ կենսաթոշակ ասելով հիմնականում հասկանում են կենսաթոշակի անցնելուց հետո երիտասարդ տարիքում կատարած իրենց ամբողջ աշխատանքի դիմաց ըստ աշխատած տարիների թվի որպես փոխհատուցում ստանալիք փողը: Մասնավորապես, ինչպես մեկ մասնակից բացատրեց, երբ աշխատող մարդիկ հարկ են վճարում պետությանը, կենսաթոշակի անցնելիս նրանք այդ փողը պետք է ետ ստանան: Որոշ մասնակիցներ ասացին, որ կենսաթոշակների մասին մտածելիս առաջին բանը, որ նրանց միտքն է գալիս, դա ծերության ապահովագրությունն է և ապահով ծերությունը:

Գրեթե բոլոր մասնակիցները հակված էին Հայաստանում կենսաթոշակները ասոցելու փողի փոքր գումարի հետ, որ բավարար չէ կենսաթոշակառուների անգամ գոյատևման համար: Շատ մասնակիցներ համաձայնվեցին մասնակիցներից մեկի հետ, ով կենսաթոշակներն անվանեց «խորհրդանշական», որովհետև դրանք ավելի քիչ են, քան նվազագույն սպառողական զամբյուղը: Մեկ աշխատող կենսաթոշակային գումարներն անվանեց չնչին, իսկ մեկ գործատու դրանք անվանեց ծիծաղելի: Աշխատողներն արտահայտեցին մտահոգություն, որ երբ իրենք հասնեն կենսաթոշակային տարիքի, իրենց ստացած կենսաթոշակներն համապատասխան չեն լինի նորմալ ապրելու համար:

Մասնակիցները համաձայնվեցին, որ կենսաթոշակները պետք է ավելացվեն կենսաթոշակառուների առօրյա կարիքները բավարարելու համար: Այստեղ հարկ է նշել դրա հետ կապված մի հարց: Մի քանի մասնակիցներ ասացին, որ կենսաթոշակների

ավելացումը առաջ կրերի կենսաթոշակառուների կենսամակարդակի բարելավում, եթե միայն շուկայական գները չաճեն:

Բոլոր ֆոկուս խմբերի գրեթե բոլոր մասնակիցները եզրակացրել են, որ կենսաթոշակառուների կյանքը, հատկապես միայնակ ապրողներինը, Հայաստանում ապահով չէ:

Տեղեկացվածությունը Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի մասին

Մասնակիցների մեծ մասը լավ չի պատկերացնում կենսաթոշակային համակարգը: Թեև նրանք ընդունում են, որ կենսաթոշակի անցնելուց հետո եկամտի աղբյուր հանդիսանում է կենսաթոշակը, նրանք հստակ չեն պատկերացնում, թե համակարգն ինչպես է աշխատում:

Չորս նպատակային խմբերից Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի մասին ամենատեղեկացվածը գործատուներն էին: Մյուս մասնակիցներից շատ քչերն էին տեղյակ, թե ներկայումս ինչպես են կենսաթոշակները հաշվարկվում Հայաստանում: Բոլոր ֆոկուս խմբերի քննարկումների ընթացքում բացի գործատուների խմբից, միայն մեկ կամ երկու մասնակից կարողացան բացատրել, որ յուրաքանչյուր աշխատած տարվա համար 6,800 ՀՀ դրամ կազմող բազային կենսաթոշակին ավելանում է 395 ՀՀ դրամ: Բոլոր խմբերի քննարկումների ժամանակ միայն երկու մասնակից նշեցին 0,02 կազմող անհատական ինդեքսը, որը կիրառվում է 25 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում:

Մի քանի մասնակիցների կողմից նշվեց մի հարակից խնդիր, որ ոչ ոք չի հասկանում կենսաթոշակների հաշվարկման բարդ համակարգը, որովհետև լրատվամիջոցներով շատ քիչ տեղեկատվություն է տրամադրվում կենսաթոշակների մասին:

Գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը

Ֆոկուս խմբի մասնակիցներին հարց է տրվել գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետության մասին: Գրեթե բոլոր մասնակիցները բողոքել են, որ գործող կենսաթոշակային համակարգն արդյունավետ չէ, և այդպիսի կարծիքի համար հիմք է ծառայում կենսաթոշակառուների վատ կենսապայմաններ ունենալը՝ ցածր կենսաթոշակները բավարար չեն սննդամթերք գնելու կամ կոմունալ ծախսերը հոգալու համար: Որոշ մասնակիցներ ավելացրել են, որ Հայաստանում կենսաթոշակառուները չեն կարող գոյատևել, եթե ազգականների կողմից լրացուցիչ աջակցություն չստանան:

Մեկ աշխատող մասնակից բարձրացրել է ոչ ֆորմալ հատվածի հարցը և նշել, որ շատ գործատուներ չեն ցանկանում գրանցել իրենց աշխատողներին: Որոշ այլ մասնակիցներ համաձայնվել են և ավելացրել, որ արդյունքում աշխատողների մի մեծ խումբ, հատկապես մասնավոր ընկերություններում աշխատողները, կենսաթոշակ չեն ստանալու:

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

«Այսօր գործատուները աշխատողներին որպես այդպիսիք չեն ներկայացնում: Ինչ կպատահի նրանց հետ, եթե 20 տարի հետո կենսաթոշակի անցնեն: Իրավիճակն ավելի սարսափելի կդառնա, եթե ուժի մեջ մտնի նոր կենսաթոշակային համակարգը: Եթե այս չգրանցված աշխատողները սոցապ վճարներ չկատարեն, նրանք կստանան այսօրվա կենսաթոշակառուների ստացած կենսաթոշակից էլ ցածր կենսաթոշակ: Կարծում եմ, որ այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, դժվար է կենսաթոշակային համակարգը միանգամից փոխել, հատկապես, երբ այդ համակարգը չի երաշխավորում, որ կունենաս կայուն աշխատանք և գործատուն չի խաբի ու կգրանցի բոլորին: Խորհրդային ժամանակներում բոլոր աշխատողները գրանցված էին: Այսօր երիտասարդ աշխատողները, հատկապես երեխա ունեցողները, կարծում են, որ ավելի լավ է ամեն օր 1,000 դրամ վաստակեն շուկայում, քան թե մտածեն իրենց ապագա կենսաթոշակների մասին: Պատճառներից մեկն այն է, որ այդ նույն մարդիկ անգամ տեղյակ չեն, թե խնդիրն ինչ է»:

Գործատուների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Գլուղաբնակ մասնակիցները նշել են, որ ներկա կենսաթոշակային համակարգը գործում է միայն աշխատանք ունեցողների համար, և բողոքել, որ բոլոր ֆերմերներին պետությունը համարում է աշխատող, չնայած Տավուշի մարզում, օրինակ, գլուղացները նույն բերքը չեն ստանում, ինչ Արարատի մարզում:

Երկու մասնակից բարձրացրել են հաշմանդամ կենսաթոշակառուների հարցը և խոսել բյուրոկրատական քաշքշուկների մասին, որոնց նրանք պետք է դիմակայեն իրենց հաշմանդամությունն ապացուցելու համար:

Գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը. գործատուներ

Որոշ գործատուներ հույս են հայտնել, որ Հայաստանում մի քանի տարի հետո կենսաթոշակային համակարգը կգործի պատշաճ կերպով, այլապես մարդիկ հավատ չեն ունենա իրենց ապագայի նկատմամբ: Ավելի տարիքով գործատուներին, ավելի շատ, քան երիտասարդներն, մտահոգել է այն, որ եթե իրավիճակը շուտով չփոխվի, կենսաթոշակային տարիքում իրենք կստանան նույն փոքր գումարներն, ինչ ստանում են կենսաթոշակառուներն այժմ: Ավելի տարիքով գործատուներին շատ է հետաքրքրել այն, թե ինչ տեսակ հաստատություններ են աշխատում կենսաթոշակային համակարգի բարփոխումների ուղղությամբ և ինչպես են այդ բարեփոխումներն իրականացվելու:

«Արդյունավետ լինելու համար՝ (1) կենսաթոշակները պետք է լինեն կուտակային, (2) դրանք պետք է կազմեն աշխատանքային վերջին 5 տարիների ընթացքում վաստակած գումարի առնվազն 70-80 տոկոսը, ինչպես սովորաբար ընդունված է ամբողջ աշխարհում, (3) պետք է ստեղծվեն կենսաթոշակային ֆոնդեր, (4) մարդիկ պետք է հասկանան կենսաթոշակային դրույքաչափերը և տեղյակ լինեն դրանց մասին և (5) կառավարությունը պետք է սուբսիդավորի կենսաթոշակների մի մասը: Ի յրոմն, մարդիկ պետք է ռիսկի դիմեն և գումարները ներդնեն կենսաթոշակային ֆոնդերում, որոնք պետք է աշխատեն և նրանց շահույթ բերեն»:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

Գործատուների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Մեկ երիտասարդ գործատու նշել է, որ պետական բյուջեի ներկա եկամուտները բավարար չեն բարձր կենսաթոշակներ վճարելու համար: Ըստ նրա, կենսաթոշակային համակարգի բարեփոխումները պետք է իրականացվեն որքան հնարավոր է շուտ 15-20 տարի հետո դրական արդյունք տալու համար: Մեկ այլ գործատու արտահայտել է որոշ կասկածներ այն բանի վերաբերյալ, որ պետությունն ունի կենսաթոշակային համակարգի կատարելագործման պատասխանատվությունը ստանձնելու պատրաստակամություն Հայաստանում:

Գործող կենսաթոշակային համակարգի արդարացիությունը

Շատ մասնակիցներ գտել են, որ գործող կենսաթոշակային համակարգն արդարացի չէ: Նրանք բերել են իրենց կարծիքը հիմնավորող մի շարք պատճառներ:

Որոշ մասնակիցներ բողոքել են, որ համակարգն արդարացի չէ, որովհետև կենսաթոշակի չափերը շատ փոքր են, հատկապես դրանք սպառողական զամբյուղի հետ համեմատելիս: Մեկ մասնակից համակարգի անարդարացի լինելը կապել է այն բանի հետ, որ բացակայում է իրենց կողմից պետությանը վճարած փողը խնայելու հնարավորությունը:

Մեկ կին մասնակից նշել է և մի քանիսը համաձայնվել են, որ վերջերս կայացրած որոշումը՝ կենսաթոշակի իրավունակության նույն տարիքը՝ 63 տարեկան և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար, արդարացի չէ, և կանայք պետք է ավելի վաղ անցնեն կենսաթոշակի, քան տղամարդիկ, ըստ իրենց ֆիզիոլոգիական վիճակի:

Որոշ գյուղաբնակ մասնակիցներ նշել են, որ շատ գյուղացիներ աշխատում են առանց գրանցվելու և հարկեր վճարելու, հետևաբար չեն կարողանալու ստանալ կենսաթոշակ:

Մեկ մասնակից նշել է, որ համակարգը և՛ արդարացի է, և՛ անարդար. արդարացի է, որովհետև երիտասարդ սերունդը վճարում է տարեցների համար, սակայն իրավական տեսանկյունից, պետությունն ինքը պետք է պատասխանատու լինի տարեցներին հոգ տանելու համար, այլ ոչ թե երիտասարդությունը:

Մի քանի մասնակից համարել են, որ ընդհանրապես Հայաստանում կենսաթոշակների հաշվարկման եղանակն (ըստ սահմանված բանաձևի) արդարացի և օբյեկտիվ է:

**Գործող կենսաթոշակային համակարգի արդարացիությունը.
Գործատուներ**

Ի լրումն, ինչպես երկու գործատու բացատրեցին, պետության առկա եկամուտների շրջանակներում դրամամիջոցների վերաբաշխումը բավական արդարացի է՝ պետությունն աշխատողներից վերցնում է փող և այն վերաբաշխում չաշխատողների միջև, ներառյալ՝

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

հաշմանդամները: Ըստ այդ գործատուների, հասարակությունը ամբողջովին տեղյակ չէ վերաբաշխման մեխանիզմների և սկզբունքների մասին, թեև համապատասխան օրենսդրությունն առկա է:

Գործող կենսաթոշակային համակարգի արդարացիությունը. Աշխատողներ

Մեկ աշխատող նշել է, որ հաշվի առնելով այսօր Հայաստանում իրավիճակը, գործող կենսաթոշակային համակարգն արդարացի է. Հայաստանն աղքատ երկիր է և չի կարող տրամադրել ավելի բարձր կենսաթոշակներ, փաստորեն պետությունն անում է անգամ ավելին, քան կարող է:

Համեմատաբար բարձր աշխատավարձ ստացող երկու աշխատող մասնակից արտահայտել են անհանգստություն, որ կենսաթոշակները հաշվարկելիս ներկայումս հաշվի չեն առնվում աշխատավարձի չափերը: Նրանք նշել են, որ ավելի բարձր աշխատավարձ ստացողները պետք է ստանան ավելի բարձր կենսաթոշակներ: Ըստ այդ աշխատողների, նրանք արդեն սովորել են բանեկեցության բարձր աստիճանի և ծերության հասակում իրենց կենսամակարդակի փոփոխությունը հատկապես ցավագին կլինի:

Վերջին ժամանակների կենսաթոշակների բարձրացումը Հայաստանում

Գրեթե բոլոր մասնակիցները լսել են 2008 թվականի հունվարին Հայաստանում կենսաթոշակների չափերի բարձրացման մասին, իսկ նրանց մեծ մասը հայտարարել է, որ այդ բարձրացումները չեն բարելավել կենսաթոշակառուների կենսամակարդակը, որովհետև միաժամանակ բարձրացել են շուկայական գները և նվազել է դրլարի փոխանակման դրույքաչափը:

«Եթե կենսաթոշակներն օգտագործվեն ըստ նշանակության՝ վարձավճարները մուծելու, սննդամթերք գնելու, նորմալ կենսամակարդակ ունենալու համար, սոցիալական անարդարություն տեղ չի գտնի: Սակայն երբ կենսաթոշակները բարձրացվում են բոլոր ապրանքների գների հետ միասին երեք-չորս անգամ...»

Քաղաքաբնակների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Վերաբերմունքը կենսաթոշակային համակարգի առաջարկված բարեփոխումների նկատմամբ

Նախքան կենսաթոշակային համակարգի առաջարկված բարեփոխումների մասին քննարկումը ֆոկլուս խմբի մասնակիցներին բացատրվել է, թե ինչ են բարեփոխումները: Բացատրելուց հետո նրանց հարց է տրվել, թե ո՞ր դրույթներին են իրենք կողմ, որո՞նց՝ դեմ,

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

արդյո՞ք առաջարկված կենսաթոշակային բարեփոխումները կգործեն Հայաստանում և կառավարությունը որքա՞ն արագ պետք է այդ փոփոխություններն իրականացնի:

Հայաստանում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների թեր և դեմ փաստարկները

Ֆոկուս խմբի մի քանի մասնակիցներ կենսաթոշակային համակարգի առաջարկվող բարեփոխումները համարել են բարդ: Նրանք ասել են, որ տեսական մասը լավն է, սակայն լավ պետք է լինի նաև գործնական մասը, և ավելացրել, որ պետությունը պետք է շատ ջանք գործադրի կենսաթոշակների բարեփոխման իր նպատակները իրագործելու համար և պետք է հստակեցնի բարեփոխումների իրականացման մեխանիզմն ու բերի համապատասխան բացատրություններ:

Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկատվության բացակայությունն է, որ թվում է առաջ է բերում դիմադրություն բարեփոխումներին: Ինչպես ասել է մեկ քաղաքաբնակ մասնակից, նա դեմ է կենսաթոշակային բարեփոխումներին, որովհետև չի հասկանում, թե որոնք են դրանց դրդապատճառները: Արտահայտվել են որոշակի կասկածներ այդպիսի բարեփոխումներ նախաձեռնելու պետության շարժառիթների նկատմամբ: Մասնակիցներից մեկն ասել է, որ տնտեսագետ լինելով հանդերձ, նա դժվարանում է հասկանալ առաջարկվող փոփոխությունները, և հետևաբար բնակչության, հատկապես երիտասարդ աշխատողների հետ, պետք է տարվեն շատ քննարկումներ դրանք բացատրելու նպատակով, և այդ բացատրությունները պետք է լինեն որքան հնարավոր է հստակ:

Մասնակիցներից ոմանց դուր չի եկել այն միտքը, որ պետությունն արդեն որոշել է կենսաթոշակային բարեփոխումներն ամենայն մանրամասնությամբ և մարդկանց ստիպում է դրանք ընդունել: Նրանք նշել են, որ ցանկացած բարեփոխում պետք է մանրամասն բացատրել և չպարտադրել, իսկ մարդկանց անհրաժեշտ է ներկայացնել մի քանի տարբերակ և մի քանի կենսաթոշակային սխեմաներ:

«Ես ընդունում եմ, որ պետությունն ինձ կարող է ստիպել սոցիալական ապահովագրական վճարներ կատարել, սակայն այն պետք է նաև ապահովի, որ ես որոշ սոցիալական ապահովություն ունենամ կենսաթոշակի անցնելուց հետո: Ավելին, ես ցանկանում եմ ինքս որոշել ինչպե՞ս, որտե՞ղ/ո՞ւմ կատարեմ այդ վճարումները: Եթե ես կարող եմ ընտրել և մի քանի միմյանց հետ մրցակող բանկերից որևէ մեկում ներդնել իմ փողը, դա ինձ համար կլինի ընդունելի տարբերակ, սակայն վախենում եմ, որ ամեն ինչ դարձյալ մոնոպոլացվի: Ես շատ ուրախ կլինեմ, եթե ունենամ ընտրության հնարավորություն մի քանի մրցակցող ընկերություններից, որոնք առաջարկում են տարբեր փաթեթներ և ռազմավարություններ»:

Քաղաքաբնակների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Մի քանի մասնակիցներ նշել են, որ իրենք հասկանում են, որ պետությունը չունի բարձ կենսաթոշակ վճարելու համար դրամամիջոցներ և բարեփոխումները համարում են որպես այլընտրանք կենսաթոշակների հայթայթմանը:

Մասնակիցների մեծ մասն արտահայտվել են աշխատողների վրա հարկային բեռի մեծացման դեմ, քանի որ հարկերի մեծացումը կազդի զուտ աշխատավարձի չափերի վրա: Մասնակիցները բողոքել են, որ աշխատավարձերն այնքան բարձր չեն, որպեսզի աշխատողները խնայողություններ կուտակեն իրենց հաշիվների վրա:

Գրեթե բոլոր մասնակիցները ցանկանում են ստանալ պետության երաշխավորությունը՝ կապված կենսաթոշակային համակարգի արդյունավետ իրականացումն ապահովելու հետ: Պետք է նշել մի հակասական երևույթի մասին՝ թեև պետության նկատմամբ վստահությունը բարձր չէ, մասնակիցները նախընտրում են ներդրումներ կատարել ավելի շուտ պետական հաստատությունների, քան թե մասնավոր ընկերությունների մեջ:

«Ինչ կպատահի, եթե ես բանկի հետ կնքեմ պայմանագիր և հինգ տարուց հետո այն անհետանա: Պետության կողմից որևէ երաշխիք կլինի: Մեզ պետք են պետության կողմից երաշխիքներ»:

Քաղաքաբնակների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Որոշ մասնակիցներ արտահայտել են անհանգստություն, որ չգրանցված աշխատողները չեն ներառվի նոր համակարգում:

Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ թեր և դեմ կարծիքներ. Աշխատողներ

Առաջարկվող կենսաթոշակային համակարգում աշխատողները կուզեին տեսնել գնաճից պաշտպանող երաշխիքներ: Ինչպես նշեց աշխատողներից մեկը, մարդը կարող է գումարն իր հաշվում կուտակել, և ապագայում մի օր այդ գումարն կարժեզրկվի: Մեկ այլ մասնակից նույնիսկ նախընտրեց խնայողությունները տանը պահել, քան տրամադրել ակտիվների կառավարիչներին՝ մասնավոր ընկերություններում ներդնելու համար: Նման վերաբերմունքի պատճառը նրանց վախն է, որ պետությունը երաշխիքներ չի տրամադրի, և իրենք կկորցնեն իրենց գումարները:

Աշխատողներից մի քանիսին դուր եկավ այն գաղափարը, որ որպես անհատներ նրանք հնարավորություն ունեն վերահսկել իրենց հաշիվներում կուտակված գումարը: Նրանք ողջունեցին այն գաղափարը, որը իրենք կորոշեն՝ ինչպես կառավարել և որտեղ ներդնել իրենց կենսաթոշակային խնայողությունները:

Մյուս կողմից աշխատողներից մեկը նշեց, որ չի ցանկանա պատասխանատվություն ստանձնել իր գումարները ներդնելու վայրը որոշելու հարցում և

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

բարձրացրեց այն հարցը, թե ո՞վ իրեն կապաշտպանի սխալ որոշումներից: Երբ նրան բացատրեցին, որ կլինեն խորհրդատվական կազմակերպություններ, որոնց հնարավոր կլինի դիմել այն դեպքում, երբ մարդիկ կայուն ներդրումների վերաբերյալ ֆինանսական գիտելիքներ չեն ունենա, աշխատողը պնդեց, որ դեմ է, քանի որ նման ծառայությունների համար կպահանջվի վճարել. «Բոլոր հարկերն ու այս ծառայության համար հավելյալ վճարելուց հետո ես կրկին կարող եմ սխալ տեղ կատարել իմ ներդրումները և վերջնական արդյունքում ոչ ոք չի երաշխավորի, որ ես նորմալ կենսաթոշակ կստանամ»:

Ավելի մեծահասակ մի քանի աշխատողներ էլ արտահայտեցին իրենց վրդովմունքը, որ շատ քիչ գործատուներ են աշխատանքի ընդունում 40-ից բարձր տարիքի անձանց և ավելին, ոչ բոլոր գործատուներն են գրանցում աշխատողներին: Նրանք վախենում են, որ երկու դեպքում էլ այդ մարդիկ դուրս կմնան կենսաթոշակային բարեփոխումների գործընթացից:

Չայաստանում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ թեր և դեմ կարծիքներ. Գործատուներ

Գործատուներին մտահոգում է, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները կհանգեցնեն գործատուների կողմից՝ իրենց աշխատողների համար վճարվող սոցիալական վճարների/հարկերի բարձրացմանը: Սակայն երբ նրանց բացատրվեց, որ գործատուներն այլևս պատասխանատու չեն լինի տարիքային կենսաթոշակների համար վճարումներ կատարել կառավարությանը ու աշխատողներն ամբողջությամբ իրենք պատասխանատու կլինեն իրենց վճարումները կատարելու, երկու ֆոկուս խմբերում էլ գործատուները փոխեցին բարեփոխումների վերաբերյալ իրենց կարծիքը դեպի դրական: Գործատուներից մեկը նշեց, որ երբ տարիներ առաջ ինքն էր աշխատող, նրան իր աշխատավարձի ողջ գումարը չէին վճարում և ինքը չգիտեր, թե այդ գումարն ուր էր փոխանցվում: Սակայն, ինչպես նա նշեց, եթե բարեփոխումները տեղի ունենան, ոչ մի աշխատող այլևս նման պայմաններ չի ընդունի: Այլ գործատուներ էլ նշեցին, որ այնուամենայնիվ բարեփոխումները կգործեն միայն այն պարագայում, եթե աշխատավարձերը բարձրանան:

«Իմ կարծիքով, բարեփոխումներից կշահեն բոլորը: Բացի այդ, ֆինանսական շուկան կզարգանա և արդյունավետորեն կաշխատի: Այնպես որ բարեփոխումները նույնիսկ ուշացած կարելի է համարել: Ես կարծում եմ, որ դրանք կբարելավեն թոշակառուների կենսամակարդակը և կունենան նաև տնտեսական ու քաղաքական արդյունքներ: Դրանով կնվազի նաև ստվերային տնտեսության մակարդակը»:

Գործատուների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

«Որպես ՀՀ քաղաքացի ես պետք է ասեմ որ ինձ դուր է գալիս այս բարեփոխումների գաղափարը: Եթե ոչինչ տեղի չունենա և ես ի վիճակի լինեմ կուտակելու գումար, ապա դա շատ լավ կլինի: Ես միայն հույս ունեմ, որ ոչինչ տեղի չի ունենա, սակայն եթե կատարվի այն, ինչ կատարվեց մեր ծնողների հետ, ովքեր իրենց բոլոր խնայողությունները պահում ԲՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

էին որպես ավանդներ, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո կորցրեցին ամեն ինչ: Երբ մարդիկ տեսնեն, որ եթե հարկ են վճարում, ապա լավ են ապրում, այն ժամանակ համակարգը կգործի: Ներկայիս համակարգը սխալ է, քանի որ տարբեր աշխատավարձ ստացող անձինք կենսաթոշակի նույն գումարն են ստանում»:

Գործատուների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

«Կուտակային հաշիվների գաղափարն ինձ դուր է գալիս: Ավելի շատ վաստակող աշխատողները կկարողանան ավելի շատ կուտակել իրենց հաշիվներում և ավելին կստանան, երբ կանցնեն կենսաթոշակի: Սակայն հարկի դրույքաչափը չափազանց բարձր է, հատկապես նրանց համար, ում աշխատավարձը ցածր է»:

Գործատուների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

«Ցածր աշխատավարձ ունեցողներից 31 տոկոս պահելը նրանց կենսամակարդակն ավելի կիջեցնի, քան թոշակառուներինն է»:

Գործատուների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների արդյունավետությունը

Մի քանի մասնակիցներ նշեցին, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները Հայաստանում չեն գործի, քանի որ մարդիկ այստեղ իրականացվող որևէ փոփոխության չեն վստահում: Այստեղ նույնպես բարձրացվեց կառավարության վստահելիության հարցը: Մի մասնակից նշեց, որ մարդիկ կառավարությանը չեն վստահում և չեն հավատում, որ իրենց խնայողությունները կվերադարձվեն, քանի որ կառավարությունը չվերադարձրեց խորհրդային տարիներին կատարված մարդկանց ներդրումները: Մյուսները նույնպես համաձայնեցին այս կարծիքին:

Նույնիսկ բարձրացվեց այն հարցը, թե արդյո՞ք կառավարությունը կունենա ֆինանսական համապատասխան կարողությունները կառավարելու կենսաթոշակային խնայողությունները: Աշխատող մասնակիցների մոտ կար այն պատկերացումը, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումներն արդյունավետ կլինեն նրանց համար, ովքեր գիտեն՝ ինչպես կառավարել ներդրումները:

Այն մասնակիցներն, ովքեր կարծում էին, որ բարեփոխումները կգործեն, առաջադրեցին մի քանի նախապայման, միայն որոնց պարագայում կգործի համակարգը, օրինակ՝ համապատասխան վերահսկողություն, սողանցքերը նվազագույնի հասցնելը, կոռուպցիայի բացակայությունը:

«Շատ կարևոր է նվազագույնի հասցնել, հնարավորության դեպքում՝ վերացնել սողանցքերը: Այստեղ խնդիրն այն է, որ բարեփոխումներ նախաձեռնողները միայն մտածում են՝ ինչ անեն, որ փող պոկեն»:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

«Եթե սա իշխանությունների բիզնեսը չդառնա, այն կգործի: Ամեն դեպքում այս համակարգը լավն է, հեղինակություն ունի ողջ աշխարհում, սակայն որպեսզի Հայաստանում հաջողություն ունենա, մեզ մոտ պետք է լինեն նվազագույն սողանքներ և առավելագույն երաշխիքներ, որոնք այսօր առկա չեն»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

Սրա հետ կապված մեկ ուրիշ խնդրի վրա էլ ենք ցանկանում հրավիրել ձեր ուշադրությունը: Մասնակիցներից շատերը բողոքեցին, որ բարեփոխումները մշակելիս հաշվի չի առնվել բնակչության ցածր կենսամակարդակը, և որ կառավարությունը պետք է հասկանար, որ շատ քչերն այս պահին կհամաձայնեն խնայողություններ կատարել ապագայի համար, քանի որ մարդիկ ավելի հակված են մտածելու իրենց ներկա վիճակի մասին, քան ապագայի: Որոշ երիտասարդ աշխատողներ ավելի շատ կենտրոնացած էին իրենց ներկայի վրա, քանի որ, ինչպես իրենք բացատրեցին, հազվադեպ են մտածել ապագայի մասին:

Մեծ թվով գործատուներ արտահայտեցին իրենց այն մտահոգությունը, որ բարեփոխումները չեն գործի բարձր հարկադրույքների պատճառով: Մեկ ուրիշ գործատու էլ հիշեց, որ խորհրդային ժամանակաշրջանում աշխատողները ստանում էին գրեթե այնքան կենսաթոշակ, որքան իրենց աշխատավարձն էր:

«Խորհրդային տարիներին աշխատողները ստանում էին 120 ռուբլի աշխատավարձ, իսկ կենսաթոշակը գրեթե հավասար էր աշխատավարձին: Բայց հիմա եթե աշխատողը ստանա 100.000 դրամ աշխատավարձ, սկսի 31 տոկոս հարկ վճարել, կենսաթոշակի անցնելիս արդյո՞ք նույն գումարը կստանա:

Գործատուների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Կենսաթոշակային քարեփոխումներն իրականացնելու կառավարության ժամանակացույցը

Գյուղական շրջանների մասնակիցների մեծամասնությունը նշեց, որ կառավարությունը պետք է ավելի դանդաղ ներմուծի կենսաթոշակային համակարգի փոփոխությունները՝ պատճառաբանելով, որ մարդկանց ժամանակ է պետք այդ քարեփոխումներին ընտելանալու համար, այնպես որ քարեփոխումները պետք է իրականացվեն փուլ առ փուլ մարդկանց փոփոխություններին նախապատրաստելու ու տեղեկացնելու համար:

Աշխատողների շրջանում կար ընդհանուր համաձայնություն, որ կառավարությունը պետք է բարեփոխումներն աստիճանաբար իրականացնի: Ըստ աշխատող

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի քարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

մասնակիցներից մեկի՝ հասարակության արձագանքը սկզբնական շրջանում դրական չի լինի, և մարդկանց ժամանակ է պետք այդ փոփոխությունները հասկանալու և ընդունելու համար: Մեկ ուրիշ աշխատող նույնիսկ առաջարկեց, որ պետք է փորձաշրջան լինի, որպեսզի տեսնեն՝ արդյո՞ք բարեփոխումներն արդյունավետ են, իսկ մեկ ուրիշն էլ ավելացրեց, որ ժողովուրդը ցանկացած փոփոխություն բացասաբար է ընկալում սկզբում, այդ իսկ պատճառով պետք է շատ բացատրություններ տրվեն և քայլ առ քայլ աշխատանք կատարվի դրական արդյունքների հասնելու համար:

«Մեկը պետք է սկսի գործատուների հետ աշխատել: Այս պահին խնդիրներ ունենք գործատուների հետ, ովքեր չեն ցանկանում կրճատ աշխատաժամանակով աշխատողների ընդունել աշխատանքի, քանի որ նույն սոցիալական վճարներն են կատարում, ինչ լրիվ աշխատաժամանակով աշխատողի դեպքում: Այսօր երիտասարդների հետ կապված խնդիր ունենք: Արդյո՞ք կան երաշխիքներ, որ երիտասարդներն աշխատաշուկա կմտնեն կրթական հաստատությունն ավարտելուց հետո: Կարճ ասած՝ շատ գործ կա անելու: Այս գործընթացը պետք է շատ վաղուց սկսված լիներ: Կան գործատուներ, որոնք լրիվ մոռացել են կամ չգիտեն կամ չեն ցանկանում իմանալ հարկերի մասին: Որքանո՞վ են իշխանությունները պատրաստ ստիպելու այդ գործատուներին վճարել հարկերը: Սա այնքան բարդ գործընթաց է, որ չեմ կարող ասել, թե արդյունքն ինչ կլինի: Պարզ ասած՝ կամք պետք է դրսևորեն երկու կողմերն էլ: Միասին պետք է ընթանանք դեպի այս նպատակները»:

Գործատուների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Քաղաքային շրջանների մասնակցիներից մի քանիսը նշեցին, որ բարեփոխումների իրականացման արագությունը պետք է որոշվի մասնակցության գործընթացներով: Այն մասնակիցներն, ովքեր համարում են, որ բարեփոխումները պետք է իրականացվեն դանդաղորեն, բացատրեցին, որ հնարավոր չէ գործել շատ արագ, քանի որ համակարգը չունի անհրաժեշտ կառուցվածքային բազան ու օպերացիոն մեխանիզմները:

«Եթե կառավարությունն ի վիճակի լինի վերանայել բոլոր կարծիքները, կազմակերպել արշավ, մշակել օրենսդրական ամբողջական փաստաթղթեր, թող արագ լինի, բայց եթե կարիք լինի քննության առնել կարծիքները, մտածել դրանց շուրջ, այն պետք է ավելի դանդաղ իրականացի»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկուս խմբի մասնակից

Մասնակիցներից երկուսն առաջարկեցին, որ ներկայիս կառավարությունը պետք է բարեփոխումներն իրականացնի, քանի դեռ այն իշխանության գլուխ է, հակառակ դեպքում նոր կառավարությունը հանդես կգա իր սեփական նոր ծրագրով:

Գործատուները շեշտադրեցին կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ իրազեկման կարևորությունը: Ինչպես բացատրեց գործատուներից մեկը, կառավարությունը նախ պետք է լավ նախապատրաստվի, այնուհետև պետք է նախապատրաստի բնակչությանը և բացատրի բոլոր մանրամասները զանգվածային

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄԶԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

լրատվամիջոցներով կամ հանդիպումների միջոցով: Տեղական իշխանությունները նույնպես պետք է ներգրավվեն այս գործընթացում: Ըստ մեկ այլ գործատուի՝ այս գործընթացում շտապողականություն պետք չէ, այլ կարևոր է լավ նախապատրաստումը, որպեսզի բարեփոխումներն օպտիմալ կերպով ընթանան:

Մասնակիցների վերաբերմունքը կենսաթոշակային ընտրված հարցերի նկատմամբ

Ֆոկուս խմբերի հետ քննարկվեցին կենսաթոշակներին վերաբերող մի շարք ընտրված հարցեր, որոնց նպատակն էր պարզել բնակչության վերաբերմունքն այդ հարցերի նկատմամբ:

Տարբեր տարիքային խմբերին առնչվող մոտեցումների արդարացիությունը

Ֆոկուս խմբի մասնակիցներին բացատրվեց, որ տարբեր տարիքային խմբերի նկատմամբ կկիրառվեն տարբեր մոտեցումներ, և քննարկման նպատակն էր պարզել նրանց կարծիքն այդ մոտեցումների արդարացիության վերաբերյալ:

Մասնակիցներից շատերը նշեցին, որ տարբեր մոտեցումների կիրառումն արդարացի չէ, հատկապես այդ կարծիքին էին ավելի մեծ թվով մասնակիցներ քաղաքային շրջաններից: Սակայն ընդհանուր առմամբ պատկերացումը, թե ինչու են տարբեր տարիքային խմբերի համար նախատեսվել տարբեր մոտեցումներ, թերի էր: Մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ ցանկացած բան, որ պատրաստվում է, արդարացի չէ: Ոմանք բացատրեցին, որ մարդիկ պետք է ընտրության հնարավորություն ունենան՝ ցանկանալով են ներգրավվել նոր կենսաթոշակային համակարգի մեջ, թե՞ ոչ՝ անկախ նրանց տարիքից:

Մյուս կողմից, աշխատողներից մեկն էլ նշեց, որ բարեփոխումները մշակվել են մասնագետների կողմից մի քանի տարի շարունակ, և ինքը պարզապես պետք է վստահի, որ տարիքի հիման վրա տարբեր մոտեցումներն անհրաժեշտ են:

Նրանք, ովքեր համարում էին, որ տարբեր մոտեցումների կիրառումն արդարացի է, հիմնականում 40-անց տարիքի մասնակիցներն էին, ում դուր էր գալիս այն գաղափարը, որ իրենք կարող են որոշել՝ ցանկանալով են միանալ կուտակային համակարգին, թե՞ ոչ:

խոցելի բնակչությանը կենսաթոշակի կամ նպաստների տրամադրումը

Բոլոր մասնակիցները համաձայնեցին, որ խոցելի խմբերին, ինչպես օրինակ՝ մանկահասակ երեխաներ ունեցող ծնողներին, հաշմանդամներին կամ օրինակաճորեն գործազուրկներին պետք է տալ կենսաթոշակի կամ նպաստի իրավունք, նույնիսկ եթե նրան չեն աշխատում կամ վճարում հարկ: Բոլորը համաձայն էին, որ պետությունը

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

միանշանակորեն պատասխանատու է իր բոլոր քաղաքացիների համար և հասարակության խոցելի շերտերը պետք է տարբեր տեսակի աջակցություն ստանան, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն:

«Անշուշտ այդ բոլոր խոցելի խմբերի մասին պետք է հոգ տարվի, հակառակ դեպքում՝ էլ ի՞նչ խոսք կարող է գնալ ազգի, ժողովրդի ու պետության մասին»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

Մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ խոցելի անձինք պետք է ստանան ավելի քիչ, քան նրանք, ովքեր աշխատել և հարկեր են վճարել, սակայն նրանց մասին պետք է հոգ տանել և նրանց բարեկեցությունը պետք է ապահովվի նվազագույն նպաստների միջոցով: Մեկ այլ մասնակից կատարեց այն դիտարկումը, որ այդ վճարումները պետք է նախատեսվեն պետական բյուջեից որպես սոցիալական պաշտպանություն, որպեսզի, օրինակ՝ դրանք կենսաթոշակային բյուջեից չֆինանսավորվեն:

Չգրանցված աշխատողներին ֆորմալ հատված բերելու խթանները

Ֆոկլուս խմբի մասնակիցները նշեցին մի շարք խթաններ, որոնցով հնարավոր կլինի աշխատողների ֆորմալ հատված բերել, օրինակ՝ բարձրացնել աշխատավարձերը և նվազեցնել հարկերը:

Մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ պետությունը բարձրացրել էր հարկ չվճարողների տույժերը: Այլ մասնակիցներ էլ նշեցին, որ օրենքի կիրարկումը և հարկային համակարգի խիստ վերահսկումը կստիպի հարկ չվճարողներին աշխատել ֆորմալ հատվածում: Այնուամենայնիվ, մասնակիցներից մեկը պնդում էր, որ պետությունը պարզապես չի ցանկանում նրանց հարկային դաշտ բերել, սակայն չպատճառաբանեց՝ ինչու: Այստեղ ուշագրավ է հարակից մեկ այլ հարց. գրեթե բոլորը համաձայնեցին, որ նախևառաջ բոլոր «օլիգարխներին» պետք է պարտադրվի հարկ վճարել, այնուհետև՝ մնացածներին:

Ընդհանուր առմամբ մասնակիցները եկան այն համաձայության, որ ոչ-ֆորմալ հատվածում գտնվողները պետք է տեղեկացվեն, որ իրենք կենսաթոշակ չեն ստանա և թե ինչպես է ձևավորվում ու հաշվարկվում կենսաթոշակը: Իրազեկվածության մակարդակը պետք է բարձրացվի պրոֆեսիոնալ կերպով իրականացված հանրային իրազեկման արշավների միջոցով: Մասնակիցներից մեկը նույնիսկ ավելացրեց, որ կուտակային համակարգի մասին ավելի շատ տեղեկատվություն ունենալը խթան կհանդիսանա չգրանցված աշխատողների համար՝ փոխելու իրենց կարգավիճակը: Մեկ այլ մասնակից էլ դիտարկեց, որ այս բարեփոխումների պատճառով սովորաբար տնտեսությունը կփոքրանա և ավելի շատ աշխատողներ ցանկության կունենան գրանցվելու:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

«Հարկերը շատ բարձր են այսօր: Իմ կարծիքով սա է միակ պատճառը՝ ինչու մարդիկ չեն ցանկանում ֆորմալ դաշտում աշխատել»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

Չգրանցված աշխատողները գիտակցում են, որ առանց գրանցման իրենք ապագայում կզրկվեն կենսաթոշակից, սակայն դա նրանց այնքան էլ չի հետաքրքրում, նրանք նախընտրում են իրենց այսօրվա վաստակը»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

Գյուղական շրջանների մասնակիցները նշեցին, որ գյուղական բնակչության եկամուտը մեծապես տարբերվում է այլ աշխատողների եկամուտներից ու իրավիճակից, և հատուկ չափանիշներ ու միջոցառումների պետք է իրականացվեն նրանց ֆորմալ դաշտ բերելու համար:

Չգրանցված աշխատողներին ֆորմալ հատված բերելու խթաններ. Աշխատողներ

Գրեթե բոլոր աշխատողները համաձայնեցին, որ եթե չգրանցված աշխատողների համար խթաններ ստեղծվեն, նրանք կցանկանան ֆորմալ հատվածում աշխատել, իսկ առաջին ու ամենակարևոր բանը, որ նրանք պետք է հասկանան, այն է, որ աշխատավարձն ուղղակի կապ ունի կենսաթոշակի հետ: Այսինքն, եթե նրան այսօր հարկեր չվճարեն, վաղը կենսաթոշակ չեն ստանա: Աշխատողներն ասացին, որ իրենք էլ պետք է պահանջեն, որ իրենց իրավունքները պաշտպանվեն, իսկ դրա համար անհրաժեշտ կլինի բարձրացված հարցերի վերաբերյալ իրազեկվածություն:

Երկրորդ, աշխատողները համարում են, որ գործատուների վրա պետք է ճնշում և վերահսկողություն գործադրվի, որպեսզի իրենց աշխատողներին մտցնեն ֆորմալ դաշտ: Գործատուները բացատրեցին, որ իրենք շահագրգռված չեն հավելյալ հարկեր վճարելու, այդ իսկ պատճառով համոզում են աշխատողներին ավելի բարձր աշխատավարձով ոչ ֆորմալ հատվածում լինել, սակայն ստանալ նաև «հավելավճարներ»:

Ինչպես նշեց աշխատողներից մեկը, այս երկու փոխկապակցված գործոնները ճնշում են գործադրում գործատուների վրա, և աշխատողներին ուղղված տեղեկատվական արշավը կրեթի ցանկալի արդյունքները:

«Ես արդեն ութ ամիս է աշխատում եմ, բայց գրանցված չեմ: Շատ անգամ եմ դիմել տնօրենին և աշխատակազմի ղեկավարին, ու ամեն անգամ նրանք ինձ ասել են մի քիչ էլ սպասել: Նրանք չեն ասում «ոչ», բայց ես արդեն հունիս ամսից սպասում եմ: Մեր ընկերությունում 45 հոգուց միայն 9 է գրանցված: Ես նույնիսկ խնդրել եմ, որ իմ գումարներն ինձ տան (այժմ ստանում եմ 60,000 դրամ, բայց պետք է ստանայի 67,000), որ ինքս իմ սոցիալական վճարները կատարեմ: Դիմել եմ մեր գլխավոր հաշվապահին, նա

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

նույնիսկ չի փորձել թաքցնել, որ իրենք խուսափում են յուրաքանչյուր աշխատողի համար 7,000 դրամ սոցիալական վճարը վճարելուց ու գումարը կուտակում են ու որպես կաշառք տալիս»:

Աշխատողների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

«Երբ օդանավակայանում աշխատանքի ընդունվեցի, կադրերի բաժնի ղեկավարն ինձ խնդրեց աշխատանքային գրքույկ ներկայացնել: Նա ինձ չհարցրեց՝ ուզու՞մ եմ ունենալ աշխատանքային գրքույք, թե՞ ոչ, պարզապես պահանջեց: Երբ ասացի, որ գրքույկ չունեմ, նա ինձ տվեց փաստաթղթերի ցանկը, որոնք պահանջվում են գրքույկ ստանալու համար: Նա ինձ չհարցրեց՝ ցանկանու՞մ եմ գրանցվել, թե ոչ: Իսկ այլ վայրերում մշտապես հիշեցնում ես գործատուներին, որ փորձաշրջանից հետո նրանք քեզ պետք է որպես պաշտոնական աշխատող գրանցեն: Նման գործատուները փորձում են քեզ համոզել, որ եթե մի փոքր սպասես, հաճախորդների թիվը մեծանա, քո աշխատավարձն էլ կբարձրանա և այլն: Ամեն ինչ արվում է աշխատողներին չգրանցելու համար»:

Աշխատողների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Աշխատողներից մի քանիսն էլ նշեցին, որ այս խնդրի լուծումը կապված է առաջարկվող կենսաթոշակային բարեփոխումների հետ: Այլ աշխատողներ բացատրեցին, որ բարեփոխումների ծրագիրն այնքան գրավիչ պետք է լինի, որ բոլոր գործատուներն իրենց աշխատողներին ֆորմալ հատված բերեն: Օրինակ՝ հարկերը գործատուների համար պետք է նվազեցվեն ըստ նրանց ունեցած աշխատողների թվի: Աշխատողները հատկապես ի նկատի ունեին փոքր բիզնեսը, որին պետք է հարկային տարկետման արտոնություն տրվի բիզնեսն սկսելու ժամանակահատվածում: Բացի այդ, որոշ աշխատողներ հավատացած են, որ բարեփոխումների այն փոփոխությունը, որ միայն աշխատողներն են պատասխանատու լինելու կառավարությանը կենսաթոշակային վճարները կատարելու համար խթան կհանդիսանա, որ գործատուներն աշխատողներին գրանցեն:

Ընդհանուր առմամբ, աշխատողները գոհ չեն Հայաստանի հարկային համակարգով: Որոշ աշխատողներ անդրադարձան նաև հարկային համակարգի կոռումպացվածությանը:

Աշխատողներն ունեին այն կարծիքը, որ իրավիճակը հնարավոր չէ փոխել, քանի որ միշտ կլինեն գործատուներ, ովքեր կաշխատեն տնտեսության ոչ ֆորմալ հատվածում: Աշխատողներից մեկն ասաց, որ գործատուները վախենում են այսօր այդ 7000 դրամը վճարել, քանի որ այն կարող է հաջորդ ամիս դառնալ 1000 դրամ. կա անորոշության վախը:

Զգրանցված աշխատողներին ֆորմալ հատված բերելու խթաններ. Գործատուներ

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

Գործատուներից մեկը նշեց և մյուսները համաձայնեցին, որ հարկ չվճարողները պետք է ենթարկվեն քրեական հետապնդման, ինչպես ԱՄՆ-ում, և նման դեպքերը պետք է համարվեն քրեական հանցանքներ և պետք է պատժվեն: Գործատուներից մեկը բերեց զարգացած երկրների օրինակը, որտեղ նման հանցանքը պատժվում է նույնիսկ ավելի խստորեն, քան կողոպուտը, աշխատողները զրկվում են աշխատանքի իրավունքից, իսկ գործատուն համարվում է քրեական հանցագործ:

Գործատուների շրջանում կար այն ընդհանուր կարծիքը, որ աշխատավարձի ցածր լինելու պատճառով աշխատողներն իրենք են նախընտրում չգրանցվել, քան վճարել հարկեր, որի արդյունքում աշխատավարձի գումարը նվազում է: Ինչպես նրանք բացատրեցին, «այսօրվա ապրուստի» խնդիրը կա, և մարդիկ չեն մտածում, թե ապագայում ինչպիսի կյանք կունենան, այդ իսկ պատճառով նրանք մտածում են հանապազօրյա խնդիրների ու գոյատևման մասին: Այս հարցին է առնչվում գործատուների այն համոզմունքը, որ հանրության մեջ տարածված է այն կարծիքը, որ մարդիկ կարող են իրենց ողջ կյանքն աշխատել և վերջում ստանալ «ոչինչ», մարդիկ հավատ չունեն ապագայի նկատմամբ, իսկ պետությանը նրանք չեն վստահում:

Մի քանի գործատու էլ համարում էր, որ բոլոր աշխատողներին ֆորմալ դաշտ բերելու համար անհրաժեշտ է իրականացնել կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային իրազեկում, և մարդիկ պետք է հասկանան, որ իրենք կկորցնեն եկամուտներ, եթե հարկեր չվճարեն:

Դիմադրություն ֆորմալ դաշտում աշխատելուն

Ընդհանուր առմամբ ֆոկլուս խմբի բոլոր մասնակիցներն էլ համաձայն էին, որ աշխատողները պարտադրված են ոչ ֆորմալ հատվածում աշխատել հանգամանքների բերումով:

Ոչ ֆորմալ հատվածում աշխատող գրեթե բոլոր մասնակիցները գիտակցում են, որ բարձր գործազրկության պատճառով գործատուները կարող են ցանկացած բան անել, կարող են առանց պատճառի աշխատողին ազատել աշխատանքից և ընդունել՝ ում կցանկանան: Մրցակցությունն աշխատաշուկայում շատ բարձր է, իսկ չգրանցված աշխատողները վախենում են, որ եթե շատ պնդեն, կկորցնեն իրենց աշխատանքը:

«Նախևառաջ մարդիկ տեղյակ չեն, որ կորցնում են իրենց կենսաթոշակները, երկրորդ խնդիրը մրցակցությունն է: Գործատուներն ասում են. «Չես ցանկանում աշխատել, շատ լավ, աշխատել ցանկացող շատ-շատերը կան»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

«Մենք չենք պնդում, քանի որ մեր աշխատավարձերը շատ ցածր են մեր ընտանիքները պահելու համար: Եթե սկսենք պնդել, գործատուները մեզ կազատեն աշխատանքից»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

«Ամեն ամիս փորձում եմ հիշեցնել, որ որպես աշխատող պաշտոնապես գրանցված չեմ: Արդեն մեկ տարի երկու ամիս է աշխատում եմ, փորձաշրջանում չեմ, բայց ամեն անգամ լսում եմ նման պատասխաններ. «Քեզ կգրանցենք, երբ նոր գրասենյակ տեղափոխվենք» կամ «տնօրենին երկար ժամանակ է, հնարավոր չէ տեսնել»:

Աշխատողների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Մասնակիցների համար մեկ այլ խնդիր էր Հայաստանում աշխատողների պաշտպանության բացակայությունը: Մասնակիցներից մեկը նշեց, որ նույնիսկ դատարան դիմելու դեպքում վստահություն չկա, որ դատավարությունն արդար կլինի: Դատական համակարգի նկատմամբ Հայաստանում վստահության պակաս կա: Մեկ ուրիշ մասնակից ավելացրեց, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է աշխատողներին պաշտպանի:

Մի շարք մասնակիցներ, այնուամենայնիվ, համարում են, որ աշխատողներն իրենք պետք է պահանջեն իրենց պաշտոնական գրանցումը:

«Հայաստանում հակադրություն գոյություն չունի, դեկավարը միշտ ճիշտ է: Աշխատանքային օրենսգիրքը չի աշխատում, աշխատողները պաշտպանված չեն: Ցանկացած վեճի ժամանակ դատարանի վճիռը հոգուտ գործատուի է, աշխատողները Հայաստանում պաշտպանված չեն»:

Քաղաքային շրջանում կատարված ֆոկլուս խմբի մասնակից

«Եթե բոլորը պնդեն, դրական արդյունքներ կլինեն: Պայքարը պետք է համընդհանուր լինի: Սակայն հիմա շատ քչերն են պայքարում իրենց իրավունքների համար: Օրինակ, շատ քչերը կազատվեն աշխատանքից»:

Աշխատողների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Մասնակիցների վերաբերմունքը սոցիալական ապահովագրություն տրամադրելու պատասխանատվության հարցի նկատմամբ

Ֆոկլուս խմբի մասնակիցներին տրվեց այն հարցը, թե ո՞վ պետք է պատասխանատու լինի կենսաթոշակային ապահովության համար անձանց տարեց հասակում:

Կենսաթոշակի անցնելուց հետո համարժեք եկամտի ապահովումը

Այն հարցի շուրջ, թե ով պետք է պատասխանատու լինի կենսաթոշակի անցնելուց հետո անձանց համարժեք եկամուտն ապահովելու համար, կարծիքները տարբեր էին:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

Մասնակիցների մեծամասնությունն այն կարծիքի էր, որ այդ հարցում հիմնական երաշխավորողը պետք է պետությունը լինի: Մասնակիցներից մի քանիսն էլ նշեցին, որ այդ գործընթացում կարևոր է նաև անհատների դերը, հատկապես նոր համակարգում, որտեղ անհատներն իրենք են որոշելու, թե վերջնական արդյունքում իրենք ինչ են ցանկանում: Մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ գործատուները նույնպես պետք է պատասխանատվություն կրեն: Մեկ-երկու մասնակից էլ նշեց ընտանիքի մասին:

Որոշ քննարկումից հետո բոլոր մասնակիցներն էլ համաձայնեցին, որ կառավարությունը, անհատները, գործատուներն ու ընտանիքները պետք է միասին ներգրավված լինեն կենսաթոշակային գործընթացի մեջ, որում գլխավոր ու երաշխավորող դերը պետք է պատկանի պետությանը: Ինչպես բացատրեց աշխատողներից մեկը, կառավարությունը պետք է ունենա համապատասխան լծակները գործատուներին պարտադրելու վճարել գոնե նվազագույն հարկերը կենսաթոշակների համար: Պետությունը նաև պետք է երաշխիքներ տրամադրի, քանի որ կառավարության գործառույթներից մեկն էլ իր քաղաքացիներին սոցիալական երաշխիքներ տրամադրելն է: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշվեց որպես գործընթացի համար պատասխանատու մարմին:

«Անհատները պատասխանատվություն են կրում, քանի որ վճարում են հարկեր, կառավարությունը և գործատուներն էլ են կատարում իրենց վճարները պետությանը: Պետք է համագործակցելու պատասխանատվության զգացում ունենանք: Որպես գործատու ես պետք է հնարավորն անեմ աղետի դեպքում հզոր զինուժ ունենալու համար: Եթե մենք աշխատենք ու օգնենք, որ կառավարությունը թեթև լինի, առանց բեռի, այն մեզ ավելի լավ կենսապայմաններ կտրամադրի»:

Գործատուների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Ապահով կենսաթոշակային տարիքի համար ամենամեծ պատասխանատվություն կրողը

Բոլոր խմբերում էլ կար այն ընդհանուր համաձայնությունը, որ պետությունը պետք է ամենամեծ պատասխանատվությունը կրի ապահով կենսաթոշակային տարիքի համար, չնայած մի քանի աշխատողներ նշեցին, որ պատասխանատվությունը պետք է հավասարապես բաժանվի պետության ու անհատների միջև: Ըստ այս մասնակիցների բացատրության, պետությունը պետք է պատասխանատու լինի երաշխավորելու, որ լինեն աշխատատեղեր, որպեսզի մարդիկ աշխատեն և իրենց կենսաթոշակների համար վճարումներ կատարեն, մինչդեռ անհրաժեշտության դեպքում նրանք պետք է գործատուներից պահանջեն իրենց գրանցել:

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

Վերաբերմունքը կենսաթոշակային տարիքի համար խնայողություններ կատարելու նկատմամբ

Ֆոկուս խմբի մասնակիցներին հարց է տրվել կենսաթոշակային տարիքի համար ֆինանսական պլանավորման և խնայողությունների մասին:

Ֆինանսական պլանավորումը կենսաթոշակային տարիքի համար

Ֆոկուս խմբի շատ փոքրաթիվ մասնակիցներ են նշել, որ ֆինանսական պլանավորում են կատարում կենսաթոշակային տարիքի համար: Կենսաթոշակային տարիքի համար ֆինանսական պլանավորում չկատարելու պատճառներից մեկը նման խնայողությունների համար լրացուցիչ միջոցների բացակայությունն է: Պատճառներից մեկն էլ ապագայի մասին այսօր մտածելու ցանկության բացակայությունն է: Ինչպես մի աշխատող բացատրեց հայերից շատերը չեն մտածում, թե ինչպես են ապրելու կենսաթոշակի անցնելուց հետո, այլ ավելի շատ անհանգստացած են, թե որտե՞ղ են սովորելու և աշխատելու իրենց երեխաները: Քաղաքաբնակ որոշ մասնակիցներ նշեցին, որ շատ հայեր ապրում են այն հավատով, որ մի օր իրենց երեխաները հոգ կտանեն իրենց համար:

Քաղաքաբնակ երկու մասնակիցներ բացատրեցին, որ իրենք նման ֆինանսական պլանավորումներ չեն կատարում, քանի որ երաշխիք չկա, որ հաջորդ ամիս գների բարձրացում տեղի չի ունենա: Նրանք վստահություն չունեն պետության նկատմամբ և վստահ չեն, որ պետությունը կտրուկ կերպով չի բարձրացնի գները և չեն փոշիանա իրենց խնայողությունները:

Միայն մի քանի գործատուներ են նշեցիլ, որ խնայողություններ են կատարում ոսկի և տարբեր արտարժույթներ գնելու միջոցով:

Կենսաթոշակային տարիքի համար խնայողությունների հնարավոր տարբերակները

Ֆոկուս խմբի մասնակիցներին հարց է տրվել, թե ի՞նչ կարելի է անել, եթե իմանան, որ կենսաթոշակային տարիքում բավարար միջոցներ չեն ունենալու: Ֆոկուս խմբի մասնակիցները նշեցին կենսաթոշակային տարիքի համար խնայողություններ կատարելու հնարավոր բազմաթիվ տարբերակներ. դրանց թվում՝

- աշխատել ավելի երկար,
- կատարել գույքային ներդրումներ / գնել անշարժ գույք,
- գնել ոսկի,
- ներդրումներ կատարել բիզնեսում,
- սկսել սեփական բիզնեսը,
- կատարել խնայողություններ / ավելի շատ խնայողություններ կատարել բանկային հաշիվներում,

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

- գնել տարբեր արտարժույթներ,
- ներդրումներ կատարել երեխաների կրթության համար,
- գնել կյանքի ապահովագրություն,
- ներդրումներ կատարել երկու տարբեր բիզնեսներում, որպեսզի դրանցից գոնե մեկն աշխատի:

Շատ մասնակիցներ չեն կարող օգտվել որևէ տեսակի խնայողություններից և որպես հիմնական պատճառ է նշվել միջոցների բացակայությունը: Մյուսներն էլ նշել են, որ խնայողություններ չեն կատարում, քանի որ երաշխիքներ չունեն և երբեք վստահ չեն, թե հետագայում ի՞նչ է տեղի ունենալու իրենց խնայողությունների հետ: Գյուղաբնակ որոշ մասնակիցներ արտահայտվել են մասնավոր բանկերում գումարներ պահելու դեմ՝ մտահոգություն արտահայտելով, որ բանկերը կարող են սնկկանալ, ինչի արդյունքում իրենք կկորցնեն իրենց ողջ խնայողությունը: Գյուղաբնակ որոշ մասնակիցներ նշել են, որ պայմանները ստիպում են մարդկանց կուտակել պարտք և ոչ թե խնայողություններ: Քաղաքաբնակ մի մասնակից առաջարկեց Հայաստանից մեկնել կայուն կենսաթոշակային համակարգ ունեցող երկիր:

Կենսաթոշակային տարիքի համար խնայողությունների լավագույն եղանակները

Մասնակիցներից շատերի կարծիքով ավելի երկար ժամանակ աշխատելը լավագույն եղանակն է կենսաթոշակային տարիքի խնայողությունների համար՝ գույքային ներդրումներից, ոսկի գնելուց և խնայողություններից հետո: Մասնակիցների կարծիքով ավելի երկար աշխատելը միակ եղանակն է, որը ներկա պահին չի պահանջում լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Մասնակիցներից մեկը նույնիսկ նշել է, որ հույսը չի դնելու որևէ մեկի վրա, այլ համատեղությամբ աշխատելու է երկու տեղ կենսաթոշակային տարիքում բավարար եկամուտ ունենալու համար:

Խնայողությունները պահելու նպատակով տարբեր հաստատությունների նկատմամբ վստահությունը

Մասնակիցներին հարց է տրվել պարզելու խնայողությունները պահելու նպատակով տարբեր հաստատությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը:

Պետական կամ մասնավոր հատվածը կենսաթոշակային խնայողությունները ներդնելու համար

Քաղաքաբնակ մասնակիցների մեծ մասը նշել են, որ ներկայումս Հայաստանում նրանք չեն վստահում ո՛չ կառավարությանը և ո՛չ էլ մասնավոր սեկտորին իրենց կենսաթոշակային խնայողությունները ներդնելու համար: Քաղաքաբնակ մի քանի ԲՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

մասնակիցներ նշել են, որ կնախընտրեին մասնավոր սեկտորը, քանի որ մասնավոր սեկտորի կողմից ավելի պատշաճ կերպով կկատարվի կենսաթոշակային խնայողությունների ներդրումը: Մի քաղաքաբնակ բնակիչ էլ նշել է, որ մասնավոր սեկտորն առավել հուսալի է, քանի որ հիմնականում այն մտածում է իր սեփական շահի համար: Նման մասնակիցներից մեկն էլ պատասխանել է, որ կնախընտրեր մասնավոր սեկտորը, որն ունի պետության կողմից տրված երաշխիքներ: Քաղաքաբնակ երկու մասնակիցներ նախընտրել են այն սեկտորը, որի հիմքում դրված են երաշխիքներ, մինչդեռ մեկ այլ քաղաքաբնակ մասնակից վստահաբար նախընտրել է պետական սեկտորը:

Բոլոր գյուղաբնակ մասնակիցները նախընտրել են պետական սեկտորն իրենց կենսաթոշակային խնայողությունները ներդնելու համար, քանի որ այն առավել ապահով է: Մասնավոր սեկտորը կարող է սնկանալ, մինչդեռ պետությունը մշտապես միջոցներ կգտնի գումարները վերադարձնելու համար: Նշված մասնակիցները բացատրել են, որ պետական բանկերն առավել հուսալի, ապահով և պատասխանատու են, քան թե մասնավոր բանկերը:

Աշխատող մասնակիցների կեսը նախընտրել են պետական, իսկ մյուս կեսն էլ՝ մասնավոր սեկտորը: Մասնավոր սեկտորին կողմ արտահայտված մասնակիցները նշել են, որ այն առավել հուսալի է, ապահովում է եկամուտներ, քանի որ ներդրված գումարները շրջանառության մեջ են դրվում և մրցակցության արդյունքում այն առավել արդյունավետ է զարգանում: Նման աշխատողներից մեկն էլ ասել է, որ չի պատկերացնում, թե պետական սեկտորի ո՞ր հատվածում կարելի է ներդրում կատարել եկամուտներ ստանալու համար: Մասնավոր սեկտորին կողմ արտահայտված աշխատողներից մեկն էլ ասել է, որ ենթագիտակցաբար չի վստահում պետությանը, քանի որ իր ծնողները կորցրել են խորհրդային ժամանակաշրջանում բանկում պահվող իրենց գումարները: Հիմնականում միջին տարիքի աշխատողներն են նախընտրել պետական սեկտորը: Ֆոկուս խմբի աշխատող երկու մասնակիցներ նշել են, որ խանրնաբերում են երկու սեկտորներն էլ, մինչդեռ մեկ աշխատող մասնակից նշել է, որ ոչ մեկն էլ չէր ընտրի վստահության բացակայության պատճառով:

Գործատու մասնակիցների մեծ մասը նախընտրել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորները: Նման մոտեցումն ընդունելի է երիտասարդ գործատուների շրջանում, որոնք ցանկանում են զանազանություն ունենալ:

Երեք գործատուներ նախընտրել են պետական սեկտորը, քանի որ այն քիչ, թե շատ երաշխիքներ է ապահովում և ռիսկերն էլ փոքր են, մինչդեռ մասնավոր սեկտորը դեռևս զարգացած չէ: Գործատուներից մեկը նշել է, որ կնախընտրեր մասնավոր սեկտորը, մինչդեռ մեկ այլ գործատու էլ նախընտրել է ներդրումներ կատարել իր սեփական քիզներում:

«Պետք է համաձայնություն լինի նշված երկու սեկտորների միջև: Ընդհանուր առմամբ, փորձը ցույց է տալիս, որ մասնավոր սեկտորն առավել շահութաբեր է, սակայն շատ ավելի ռիսկային է, իսկ պետական սեկտորն էլ առավել հուսալի է: Ես ավելի շատ վստահում եմ պետությանը՝ չնայած առաջարկվող ցածր տոկոսագումարներին»:

Աշխատողների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Հայաստանի բանկերի նկատմամբ վստահությունը խնայողությունները ներդնելու համար

Գլուղաբնակ գրեթե բոլոր մասնակիցները չեն հստահում բանկերին՝ հիմք ընդունելով իրենց նախկին փորձը: Որոշ մասնակիցներ բերեցին «Շիրակ» բանկի օրինակը, որը սննկացել էր և որևէ փոխհատուցումներ չեն տրամադրվել կորցրած խնայողությունների դիմաց: Մյուս կողմից էլ քաղաքաբնակ մասնակիցները միտված էին հավատալու, որ բանկերը հուսալի են Հայաստանում: Ինչպես քաղաքաբնակ մասնակիցներից մեկը նշեց, նախկին ժամանակների հետ համեմատած բանկերին ներկայումս կարելի է վստահել: Մեկ այլ քաղաքաբնակ մասնակից էլ նշեց, որ որոշ բանկեր հուսալի են, մյուսներն էլ՝ ոչ:

Աշխատողները նշել են, որ ներկայումս բանկերը քիչ, թե շատ ապահով են և հնարավորություն ունեն վերադարձնելու մինչև 2 մլն ՀՀ դրամի ներդրումները: Որոշ աշխատողներ արդեն գումար են ներդրել կամ էլ պլանավորում են գումարներ ներդնել մասնավոր բանկերում:

«Ներկայումս կան բանկեր, որոնց կարելի է վստահել և աստիճանաբար այդ վստահությունը կմեծանա: 2 մլն ՀՀ դրամին համարժեք ավանդները երաշխավորված են: Այսպես, եթե տիրապետում եք ավելի մեծ գումարների, ապա կարող եք բաժանել այն և ավանդադնել տարբեր բանկերում տարբեր մարդկանց անունով»:

Աշխատողների ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Գործատուների գրեթե կեսը նշել են, որ բանկերը հուսալի են Հայաստանում, իսկ մյուս կեսն էլ՝ ասել են, որ դրանք հուսալի չեն: Բանկերի նկատմամբ վստահություն չունեցող մասնակիցները բացատրել են, որ բանկերը զարգացած չեն Հայաստանում և չունեն արհեստավարժ աշխատողներ՝ կուտակված միջոցները կառավարելու և խելամիտ ծրագրերում դրանք ներդնելու համար: Բանկերի նկատմամբ վստահություն ունեցող մասնակիցները նշել են, որ դրական վերաբերմունք ունեն Հայաստանի բանկերի նկատմամբ, քանի որ հասկանում և իրազեկված են Հայաստանի ներկա բանկային իրավիճակի մասին: Գործատուներից մեկի համոզմամբ բանկերը շատ հուսալի են, մասնավորապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ աշխարհում տիրող տնտեսական ճգնաժամի պայմաններում Հայաստանի բանկերը կայուն են: Մեկ այլ գործատու էլ նշել է, որ Հայաստանում բանկերի նկատմամբ վստահությունը մեծանում է:

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

«Բանկերը շատ հուսալի են: Կարելի է կարդալ դրանց տարեկան աուդիտի հաշվետվությունները և ընդունել, որ վարկանիշները բարձր են: Ընդհանուր առմամբ, Հայաստանի բանկային համակարգը ավելի բարձր մակարդակի վրա է այլ երկրների բանկերի համեմատությամբ: ՀՀ կենտրոնական բանկը վերահսկողություն է իրականացնում մասնավոր բանկերի նկատմամբ, ինչի արդյունքում ընդունվում են կարևորագույն նորմատիվ իրավական ակտեր, որոնք կանխում են բանկերի սննկացումը»:

Գործատուների ֆոկլուս խմբի քննարկման մասնակից

Հայաստանի ապահովագրական ընկերությունների նկատմամբ վստահությունը խնակողությունները ներդնելու համար

Բոլոր խմբերի շրջանում ընդհանուր անվստահություն կա Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունների նկատմամբ: Ավելին, միայն մի քանիսին էին հայտնի Հայաստանում գործող որևէ ապահովագրական ընկերության մասին:

Ինչպես քաղաքաբնակ մասնակիցներից մեկը նշեց, Հայաստանում գործող ապահովագրական ընկերությունների 90 տոկոսն իրենց ակտիվներն ապահովագրել են եվրոպական երկրներում և իրենց չի հետաքրքրում, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում: Երկու գյուղաբնակ մասնակիցներ խոսել են Հայաստանում ապահովագրական ընկերությունների հետ ունեցած իրենց անհաջող փորձի մասին: Նրանցից մեկը նշել է, որ 2000 գյուղացիներ գումար են հավաքել և վճարել են ապահովագրական ընկերությանը, որը նախատեսում էր ապահովագրություն աղետներից: Ապահովագրական ընկերության կողմից, սակայն, որևէ գումարներ չտրամադրվեցին, երբ հետագայում փոթորիկ տեղի ունեցավ գյուղում: Գյուղաբնակ մեկ այլ մասնակից էլ բերեց ուսուցիչների օրինակը, որոնք ունեին առողջական ապահովագրություն, սակայն ոչինչ չստացան, երբ առողջական խնդիրներ ունեին և հիվանդանոցում բուժում էին ստանում:

Գործատուների մեծ մասը նշել են, որ բանկերն ավելի հուսալի են, քան թե ապահովագրական ընկերությունները, քանի որ բանկերն ունեն իրենց սեփական միջոցները, ինչը չի կարելի ասել ապահովագրական ընկերությունների մասին: Ինչպես գործատուներից մեկն արտահայտվեց, Հայաստանում բացակայում են այնպիսի ապահովագրական ընկերությունները, որոնք նպատակ ունեն ներդրումներ կատարել բաժնետոմսերում կամ իրականացնել մոնիտորինգ և հայտնի էլ չի, թե արդյո՞ք դրանք վերա-ապահովագրում են իրենց ռիսկերը՝ միջազգային չափանիշների համաձայն: Տարսու ծառայություն ունեցող գործատուներից մեկն անհաջող փորձ է ունեցել տեղական մի ապահովագրական ընկերության հետ, երբ իրեն չի հաջողվել գումար ստանալ վթարի ենթարկված մեքենայի համար:

Աշխատողների վերաբերմունքն ապահովագրական ընկերությունների նկատմամբ կարելի է ամփոփել մասնակիցներից մեկի պատասխանում, որը պատասխանել է, որ Հայաստանում ապահովագրական շուկան դեռևս հասունացած չէ: Աշխատողներից մեկը

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

բացատրել է, որ Հայաստանում ապահովագրական ընկերությունները զարգացած չեն ի տարբերություն բանկային համակարգի, որը բավականաչափ զարգացած է և լավ ապագա ունի: Այլ մասնակիցներ էլ ասել են, որ կանոնակարգող դաշտը կասկածելի է և հասկանալի չէ, թե ո՞ր մարմինն է պատասխանատու ապահովագրական ընկերությունների գործունեության համար:

Կենսաթոշակային խնայողությունների ներդրումը տեղական կամ միջազգային ֆինանսական հաստատություններում

Մասնակիցների մեծ մասն այն կարծիքն է արտահայտել, որ միջազգային ֆինանսական հաստատություններն ավելի հուսալի են տեղականների համեմատությամբ: Այդ իսկ պատճառով, նրանց մեծ մասը կնախընտրեին իրենց կենսաթոշակային խնայողությունները ներդնել միջազգային բանկերում և ընկերություններում, քան թե տեղական ֆինանսական հաստատություններում:

Չարմանալի է, որ նման կարծիքն արտահայտել են նաև գործատուները, որոնք բացատրել են, որ միջազգային ֆինանսական հաստատությունները գործում են արդեն երկար ժամանակ և ապացուցել են իրենց հուսալի լինելը: Նրանք պատրաստ են ներդրումներ կատարել ընկերություններում միայն մանրագնահին ուսումնասիրություններից հետո: Գործատուներից մեկն ասել է, որ ներդրումներ ունի ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ընկերություններում: Մեկ այլ գործատու էլ նշել է, որ իր համար նախընտրելի են տեղական ընկերությունները, քանի որ քիչ, թե շատ տիրապետում է երկրում տիրող ֆինանսական վիճակին, ինչպես նաև փոփոխություններին ու իրականացվող բարեփոխումներին և ավելի արդյունավետ կերպով կարող է հետևել իր գումարների շարժին և միջամտել ըստ անհրաժեշտության:

Միջազգային ֆինանսական հաստատություններում ներդրումներին կողմ արտահայտված աշխատողներն ասել են, որ արդարության և մրցակցության կողմնակից են: Տեղական ֆինանսական հաստատություններին կողմնակից աշխատողները նշել են, որ նման հաստատություններն ավելի վերահսկելի են, քանի որ մոտ են գտնվում և հասանելի են:

Քաղաքաբնակ մասնակիցներն ասել են, որ որոշում կայացնելու դեպքում ուշադրություն կդարձնեին ընկերության համբավին և տեսակին, ինչպես նաև առաջարկվող պայմաններին: Երկու երիտասարդ մասնակիցներ նշել են, որ կնախընտրեին ներդրումներ կատարել տեղական ընկերություններում՝ օգնելու Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Գլուղաբնակ մասնակիցները նախընտրում են միջազգային ֆինանսական հաստատություններն այն պատճառով, որ միջազգային բանկերն առավել հուսալի են,

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

միջազգային իրավունքի նորմերն ավելի պաշտպանված են, Հայաստանը կայուն երկիր չէ և առաջարկվող տոկոսագումարներն էլ ցածր են:

Վերաբերմունքը կենսաթոշակային ներդրումների հետ **կապված ռիսկի նկատմամբ**

Ֆոկուս խմբի մասնակիցներին հարց է տրվել պարզելու նրանց վերաբերմունքը կենսաթոշակային խնայողությունները ներդնելու մասին, այն իմաստով, որ ներդրման ժամանակահատվածում ներդրված գումարը պետք է աճի: Բացի այդ, նրանց հարցրել են, թե իրենց համար ընդունելի՞ են արդյոք կենսաթոշակային խնայողությունների ներդրումների դիմաց առաջարկվող ցածր տոկոսագումարները (եկամտաբերությունը), որոնք սակայն երաշխավորված և կայուն են, թե՞ առաջարկվող բարձր տոկոսագումարները, որոնք առավել ռիսկային են:

Կենսաթոշակային խնայողությունները

Խմբերը համակարծիք էին կենսաթոշակային խնայողությունները ներդնելու հարցում: Մասնակիցների մեծ մասը կողմ էին ներդրումների գաղափարին՝ լրացուցիչ եկամուտ ստանալու ակնկալիքով: Որոշ մասնակիցներ էլ նշեցին, որ հաշվի կառնեն տոկոսագումարները, քանի որ առաջարկվող տոկոսագումարը սղաճից ցածր լինելու պարագայում ներդրումը դառնում է անիմաստ:

Մի շարք մասնակիցներ հավելեցին, որ նման ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ է, որ պետությունը տրամադրի երաշխիքներ, մյուսներն էլ նշեցին, որ ընկերությունները, որոնցում ներդրվում են կենսաթոշակային խնայողությունները պետք է լինեն կայուն և հուսալի: Մի քաղաքաբնակ մասնակից ասաց, որ կցանկանար ունենալ ներդրումների հաջող օրինակ, որին նա կհետևեր: Այլ պարագայում վստահություն չկա՝ հաշվի առնելով խնայողությունները կորցնելու Խորհրդային ժամանակաշրջանի տխուր փորձը: Մի աշխատող պնդեց, որ ավելի եկամտաբեր է գումարներն ինքնուրույն շրջանառության մեջ դնելը:

Կառավարության կողմից կենսաթոշակային խնայողությունների ներդրումը

Թեև որոշ մասնակիցներ կողմ արտահայտվեցին կենսաթոշակային խնայողությունները ներդնելու գործընթացում կառավարության ներգրավմանը, սակայն մյուսներն էլ մտահոգություններ ունեին կառավարության նկատմամբ վստահության պակասի առնչությամբ: Այդ մասնակիցները նշեցին, որ երաշխիքների բացակայության դեպքում շատ ռիսկային է կառավարությանը վստահել կենսաթոշակային խնայողությունների ներդրումները: Մի քաղաքաբնակ մասնակից մտահոգ էր, որ կարող է *ԲՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների*

կորցնել իր խնայողությունները ոչ պատշաճ ներդրումների արդյունքում: Մեկ այլ քաղաքաբնակ մասնակից նշեց, որ նման գործընթացը ռիսկային է՝ հաշվի առնելով պետական աշխատողների շրջանում առկա կոռուպցիան: Գյուղաբնակ մի մասնակից նշեց, որ ռիսկային չի լինի, եթե հարկային համակարգը լավ աշխատի և պետական բյուջեն մեծանա: Գյուղաբնակ մի մասնակից էլ ասաց, որ ցանկանում է լավ տեղեկացված լինել նման ներդրումների մասին:

Մի աշխատող նշեց, իսկ մյուսներն էլ հաստատեցին, որ ֆինանսական հարցերի մասին տեղեկատվության ներկա մակարդակն իրենց թույլ չի տալիս ճիշտ որոշում կայացնել:

Որոշ գործատուներ նշել են, որ կառավարությունն ավելի հուսալի է, քան թե մասնավոր սեկտորը, քանի որ պետությունը կայուն և մշտապես գործող հաստատություն է: Նման գործատուները ցանկացել են ունենալ պետական երաշխիքներ, վերահսկողություն և կենսաթոշակային միջոցները ներդնելու գործընթացը կարգավորող իրավական ակտեր:

Կենսաթոշակային միջոցների ներդրում իրականացնող մասնավոր ֆինանսական հաստատություններ

Մասնակիցների մեծ մասի կարծիքով բավական ռիսկային է մասնավոր ֆինանսական հաստատություններին վստահել կենսաթոշակային խնայողությունների ներդրումները և վերջիններս ողջունել են այն փաստը, որ նոր կենսաթոշակային համակարգում երաշխիքներ են տրամադրվելու ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կանոնակարգերով: Մի աշխատակից նշեց, որ ցանկալի է, որ նշված ընկերությունները հավաստագիր ունենան և բավականաչափ կոմպետենտ լինեն՝ ռիսկի ֆակտորը նվազեցնելու նպատակով: Գրեթե բոլոր մասնակիցները կիսել են այն կարծիքը, որ պետության կողմից պետք է լինեն հնարավորինս շատ երաշխիքներ նոր կենսաթոշակային համակարգն իրականացնելու, ինչպես նաև բոլոր գործընթացները կանոնակարգելու և վերահսկելու գործընթացում:

Որոշ գործատուներ նշել, որ կենսաթոշակային միջոցները կառավարելու հարցում գիտելիքների և իրազեկության պակասն է, որ թույլ չի տալիս դրական վերաբերմունք արտահայտել կենսաթոշակային միջոցները մասնավոր ֆինանսական հաստատությունների կողմից ներդնելու վերաբերյալ: Որոշ գործատուներ շեշտել են հանրության իրազեկման և կենսաթոշակային միջոցների ներդրումների թափանցիկ գործընթացի նշանակությունը: Գործատուները նաև հավելել են, որ կենսաթոշակային միջոցների ներդրումների մասին տեղեկատվության ապահովումը կօգնի հաղթահարել կենսաթոշակային միջոցների ներդրումների առնչությամբ մարդկանց շրջանում տիրող մտահոգությունները:

Կենսաթոշակային միջոցների ներդրումից ստացվող եկամուտը

Բոլոր ֆոկուս խմբերի մասնակիցների մեծ մասը և մասնավորապես տարեց մասնակիցները նշել են, որ նախընտրում են ցածր, բայց երաշխավորված և կայուն եկամուտ կենսաթոշակային միջոցների ներդրումներից: Ինչպես մի տարեց աշխատող բացատրեց 63 տարեկանից հետո մարդիկ այլևս չեն մտածում ռիսկային տարբերակների մասին: Երիտասարդ մասնակիցները, մասնավորապես կանայք նշեցին, որ նախընտրում են թեկուզ ռիսկային, սակայն բարձր շահութաբերություն ունեցող ներդրումներ:

«Նախընտրությունները կարող են փոփոխվել տարբեր տարիքներում: Այժմ, երբ ես երիտասարդ եմ, նախընտրում եմ ռիսկայնություն: Ավելի մեծ տարիքում կնախընտրեմ երաշխավորված և կայուն, սակայն ցածր եկամուտ»:

Ֆոկուս խմբի քննարկման մասնակից

Մի աշխատող նշեց, որ կարելի է սկսել ցածր դրույքով շահույթից, այնուհետև փոխել բարձր շահութաբերություն ապահովող ներդրումների: Մեկ այլ աշխատող նախընտրել է ներդնել երկուսում էլ՝ նվազեցնելու ռիսկերը և մեծացնելու եկամտաբերությունը:

Վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումներին նվիրված հանրային իրազեկման արշավի նկատմամբ

Ֆոկուս խմբի քննարկումների վերջին հատվածը նպատակ ուներ պարզել մասնակիցների վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումներին նվիրված հանրային իրազեկման արշավի նկատմամբ: Նրանց հարց է տրվել, թե տեղեկատվության ինչպիսի՞ աղբյուրներից են օգտվում կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկանալու համար և ու՞մ կվստահեին կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկատվություն ստանալու համար: Առաջարկվեց նաև կարծիք հայտնել որոշ կարգախոսերի վերաբերյալ, որոնք նախատեսված են հանրային իրազեկման արշավում օգտագործելու համար:

Կենսաթոշակային բարեփոխումների իրազեկման համար օգտագործվող տեղեկատվության աղբյուրները

Բոլոր ֆոկուս խմբերի մասնակիցների մեծամասնությունը որպես կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկատվության հիմնական աղբյուր նշեցին հեռուստացույցը: Նշվեցին նաև տեղեկատվության հետևյալ աղբյուրները՝

- ընտանիքի անդամները, ընկերները, հարևանները,

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

- ինտերնետը (ՀՀ կենտրոնական բանկի կամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայք էջերը),
- մասնագետները/փորձագետները/իրավաբանները,
- տպագիր մամուլը,
- կենսաթոշակառուները,
- պաշտոնական տեղեկագրերը,
- տեղեկատվական հանրային քննարկումները,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Երբ հարց տրվեց, թե ինչպե՞ս են տեղեկատվություն ստանալու կենսաթոշակային բարեփոխումների մասին, մեծամասնությունը պատասխանեցին, որ կոչվեն սոցիալական ծառայությունների հարցերով մարզային/տարածքային մարմնի փորձագետին կամ էլ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Որոշ մասնակիցներ նշել են ինտերնետը, իսկ մյուսներն էլ՝ թերթերը:

Մասնակիցներից մեկը նշել է, որ շատ կարևոր է, որ սոցիալական ծառայությունների աշխատողները լինեն իրազեկ՝ մարդկանց մանրամասն և արհեստավարժ կերպով տեղեկություններ տրամադրելու համար: Մեկ այլ մասնակից էլ նշեց, որ անհրաժեշտ է նախապատրաստել և տարածել բուկլետներ, մինչդեռ այլ մասնակից էլ առաջարկեց, որ տեղեկատվությունը պետք է հեռարձակել հեռուստատեսության տարբեր ալիքներով:

Վստահությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների մասին տեղեկատվության նկատմամբ

Ընդհանուր կարծիք կա ձևավորված, որ կառավարությունն ինքը պետք է ներկայացնի նոր կենսաթոշակային համակարգը: Գրեթե բոլոր մասնակիցները նշել են, որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների մասին տեղեկատվության հարցում վստահում են ինչպես կենտրոնական կառավարությանն, այնպես էլ տեղական կառավարման մարմիններին, քանի որ կառավարությունն է հանդիսանում բարեփոխումների իրականացման պատասխանատուն: Դրանց թվում նշվել են նաև սոցիալական ծառայությունները, ոլորտի մասնագետները և գործատուները: Մասնակիցներից մի քանիսի կարծիքով տեղեկատվությունը պետք է ներկայացվի ճշգրիտ և մանրամասն կերպով: Գործատուներից մեկն ավելացրեց, որ տնտեսավարող սուբյեկտները պետք է տեղեկացվեն նաև հարկային ծառայության կողմից:

Մի շարք մասնակիցներ նշել են, որ ֆոկուս խմբերում կենսաթոշակային բարեփոխումների շուրջ քննարկումներից հետո փոխվել է իրենց վերաբերմունքը բարեփոխումների նկատմամբ:

Չանրային իրազեկման արշավի կարգախոսները

Ֆոկուս խմբի մասնակիցներին ներկայացվել են տասնհինգ կարգախոսներ և առաջարկվել է քվեարկել դրանցից յուրաքանչյուրի համար: Կարգախոսները նախատեսված են եղել հրապարակային տեղեկատվության համար: Ֆոկուս խմբի մասնակիցներին տրվել են ևս մի քանի լրացուցիչ հարցեր կարգախոսների վերաբերյալ, ինչը մասնակիցներն ավելի շատ են հավանել: Զննարկումների ավարտին մասնակիցներին առաջարկվել է ներկայացնել իրենց առաջարկությունները կարգախոսների առնչությամբ:

Տասնհինգ կարգախոսներից յուրաքանչյուրն առանձին քննարկված է սույն բաժնում:

Սկսե՛ք խնայողություններ կատարել երջանիկ ծերության համար

Քաղաքաբնակ մասնակիցներից մեկին դուր եկավ այս կարգախոսը: Քաղաքաբնակ մասնակիցներից մեկն էլ բացատրեց. «Ես չեմ հավատում այս կարգախոսին: Դա անհնար է իրականացնել»: Մեկ այլ քաղաքաբնակ մասնակցի էլ դուր չեկավ կարգախոսի «սկսել» բառը: Այլ աշխատողների դուր չեկավ կարգախոսը, քանի որ նրանք չէին կարող որևէ կապ տեսնել ծերության և երջանկության միջև:

Չեր կյանքը Չեր ծեռերում է

Գյումրիի մասնակիցներից որևէ մեկին դուր չեկավ այս կարգախոսը, մինչդեռ Իջևանում դրան կողմ արտահայտվեցին յոթ մասնակից: Գյումրիի մասնակիցներից մեկն ասաց, որ այն որևէ առնչություն չունի կենսաթոշակների հետ և հնչում է որպես պատերազմի աղերսանք: Երբ Իջևանի մասնակիցներին բացատրեցին, որ արշավի նպատակն է բարձրացնել իրազեկությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին, նրանք ասացին, որ կարգախոսը շատ ընդհանուր է և հստակ չի երևում, որ այն առնչվում է կենսաթոշակներին: Հացիկ գյուղի մասնակիցներից որևէ մեկին դուր չեկավ այս կարգախոսը, մինչդեռ Գետահովիտ գյուղում այն ստացավ ամենամեծ հավանությունը (տասը ձայն) հստակ ուղերձ հաղորդելու պատճառով:

Ֆոկուս խմբերի երկու քննարկումներում ընդհանուր առմամբ հինգ աշխատողներ հավանություն տվեցին այս կարգախոսին, քանի որ ինչպես աշխատողներից մեկը նշեց. «այն ստիպում է մեզ մտածել հետևանքների մասին»: Աշխատողներից մեկն էլ առաջարկեց կարգախոսում «կյանքը» բառը փոխարինել «ապագա» բառով, մինչդեռ մեկ այլ մասնակից էլ նշեց, որ պետք է ավելացնել «ծերություն» բառը՝ կարգախոսը կենսաթոշակային բարեփոխումների հետ կապելու նպատակով: Ֆոկուս խմբերի երկու քննարկումներում ընդհանուր առմամբ երկու գործատուներ հավանություն տվեցին այս կարգախոսին:

Մտածեք Ձեր ապագայի մասին և կատարեք խնայողություններ

Այս կարգախոսը ստացավ երեք ձայն Գյումրիում և մեկ ձայն Իջևանում տեղի ունեցած ֆոկլուս խմբերի քննարկումներում: Գետահովիտ գյուղի մասնակիցներից որևէ մեկը հավանություն չտվեց այս կարգախոսին, իսկ Հացիկ գյուղում այն ստացավ առավելագույն ձայները (չորս ձայն): Հացիկ գյուղի մասնակիցներից մեկն ասաց. «մարդիկ պետք է խնայողություններ կատարեն ապագայի համար: Դա է ճիշտ ընտրությունը»:

Ֆոկլուս խմբերի երկու քննարկումներում աշխատողները, ինչես նաև որոշ գործատուներ, հավանություն տվեցին այս կարգախոսին: Կարգախոսին հավանություն տված գործատուներն ասացին, որ այն հստակ է, խորհրդատվական, այլ ոչ թե պարտադրողական բնույթ ունի, ասվում է ճշմարտությունը, առնչվում է կենսաթոշակներին և հասկանալի է նույնիսկ տարեցներին:

Տեղեկագրված որոշումներ հուսալի ապագայի համար

Շատ քչերին դուր եկավ այս կարգախոսը: Հետաքրքիր է, որ աշխատողների ֆոկլուս խմբի առաջին քննարկման ընթացքում կարգախոսը կողմ ձայն չստացավ և առավելագույն ձայները (հինգ) տրվեցին երկրորդ քննարկման ժամանակ: Կարգախոսին կողմ քվեարկած աշխատողները նշեցին, որ այն շատ դրական է և թեև կարճ է, սակայն դրանում ասվում է շատ բան: Մյուս կողմից էլ, կարգախոսին դեմ արտահայտված աշխատողները բացատրեցին, որ իմաստը հասկանալի չէ, հնարավոր չէ մտապահել, չի հանգեցնում որևէ եզրակացության և շատ քիչ բան է ասվում ծերության կամ կենսաթոշակների մասին:

Տեղեկագրված որոշումներ արժանապատիվ ապագայի համար

Մասնակիցներից, աշխատողներից և գործատուներից որևէ մեկը հավանություն չտվեց այս կարգախոսին, քանի որ, ինչպես իրենք բացատրեցին, այն նման է ընտրական/քաղաքական կարգախոսի: Գետահովիտ գյուղում այն ստացավ երեք ձայն, քանի որ ինչպես մասնակիցներն ասացին. «այստեղ մենք տեսնում ենք կառավարության պատասխանատվությունը բնակչության հանդեպ»:

Որոշեք հիմա, վայելեք հետագայում

Այս կարգախոսին կողմ քվեարկեցին երեք մասնակիցներ Գյումրիում, իսկ Իջևանում այն ստացավ յոթ ձայն: Իջևանի ֆոկլուս խմբի մասնակիցները նշեցին, որ կարգախոսը շատ լավն է և այն շատ խրախուսական է: Մասնակիցներից մեկը նույնիսկ առաջարկեց «որոշեք» բառը փոխարինել «խնայեք» բառով: Ինչպես նաև նշեց, այլ հայեր նույն կերպ կհասկանան:

Կարգախոսը մեկ ձայն ստացավ գյուղում և միայն երեք ձայն աշխատողների կողմից: Գործատուներից որևէ մեկը կողմ չարտահայտվեց այս կարգախոսին:

ԹՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի քարտեփոխումների շուրջ ֆոկլուս խմբերի քննարկումների

Որոշեր երիտասարդ և վայելեր տարեց հասակում

Այս կարգախոսին կողմ քվեարկեցին ֆոկուս խմբերի մասնակիցներից միայն երեքը: Մի գյուղաբնակ բնակիչ ասաց, որ յուրաքանչյուր անձ ցանկանում է լինել երիտասարդ և ոչ մեկը չի ցանկանում մտածել ծերության մասին: Գործատուներից որևէ մեկը ձայն չտվեց այս կարգախոսին, քանի որ ինչպես գործատուներից մեկը բացատրեց «երիտասարդ» բառը ընդունելի չի լինի: Մեկ այլ գործատու էլ ավելացրեց, որ մարդիկ կյանքը վայելում են երիտասարդ տարիքում և ոչ ծերության:

Երիտասարդ որոշումներ հուսալի ապագայի համար

Կարգախոսը հավանության չարժանացավ ո՛չ քաղաքաբնակ և ո՛չ էլ աշխատող մասնակիցների շրջանում, քանի որ ինչպես իրենք ասացին հասկանալի չէ «երիտասարդ որոշումներ» արտահայտությունը, այն աղոտ է և արտահայտությունը կարծես անավարտ է: Մի մասնակից ասաց, որ մարդիկ չեն հավատա, որ գոյություն ունի հուսալի ապագա: Որոշ մասնակիցների դուր չեկան երիտասարդ և ծեր հակադրումները: Գյուղաբնակ երկու մասնակիցներ կողմ քվեարկեցին կարգախոսին և ֆոկուս խմբի քննարկումների երկու գործատուներ հավանություն տվեցին դրան, քանի որ իրենց դուր եկավ այն, որ իրենք կարող են ընդունել որոշումներ, ինչպես նաև նրանք հավանեցին «հուսալի» բառը:

Երիտասարդ որոշումներ, բարեկեցիկ ծերություն

Այս կարգախոսը հավանության չարժանացավ ո՛չ քաղաքաբնակ մասնակիցների, ո՛չ աշխատողների և ո՛չ էլ գործատուների շրջանում, քանի որ ինչպես մի քաղաքաբնակ մասնակից ասաց հասկանալի չէ «երիտասարդ որոշումներ» արտահայտությունը: Աշխատողներին դուր չեկավ «բարեկեցիկ» արտահայտությունը: Գործատուներից մեկն արտահայտվեց «ծերություն» բառի դեմ: Մեկ այլ գործատու էլ նշեց, որ «երիտասարդ» բառի վրա պետք չէ շեշտադրում կատարել, քանի որ այն ստիպում է ոչ երիտասարդ անձանց զգալ տարեց և մոռանալ, որ իրենք նույնպես երիտասարդ են եղել: Գետահովիտ գյուղի երկու մասնակիցներ հավանություն տվեցին այս կարգախոսին, քանի որ այն կոչ է առողջ մտածելակերպ ունեցող երիտասարդներին:

Որոշեր Ձեր ապագան այժմ

Այս կարգախոսին կողմ քննարկեցին երկու մասնակիցներ Գյումրիում և չորս մասնակիցներ Իջևանում: Կարգախոսին դեմ արտահայտված մասնակիցներն ասացին, որ այն հստակ չէ, առնչություն չունի կենսաթոշակների հետ և նման է քաղաքական կարգախոսի: Գյուղաբնակ մասնակիցներից որևէ մեկը կողմ չարտահայտվեց կարգախոսին, քանի որ հնարավոր չէ ապագայի որոշումներ կայացնել, եթե պետությունն անկայուն է:

Հետաքրքիր է, որ կարգախոսը համեմատաբար շատ ձայներ հավաքեց աշխատողների շրջանում: Կողմ քվեարկեցին ընդհանուր թվով վեց մասնակիցներ (երեք

ՔՎԹԿ/ՀԱՀ հաշվետվություն ԱՄՆ ՄՁԳ/ՄՊՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների շուրջ ֆոկուս խմբերի քննարկումների

մասնակից յուրաքանչյուր ֆոկլուս խմբում): Գրան կողմ արտահայտված մասնակիցներից մեկը բացատրեց, որ կարգախոսը.

- կոչ է անում գործողություններ ձեռնարկել, այն ասում է. «ներդրումներ կատարեք այժմ և վայելեք հետագայում»,
- այլ հայեր կհասկանան, որ անհրաժեշտ է որոշում ընդունել,
- դրանում շեշտվում է որոշում ընդունելու կարևորությունը

Աշխատողներից մեկն առաջարկեց կարգախոսում ավելացնել «կենսաթոշակներ» բառը:

Կարգախոսն առավելագույն կողմ ձայներ ստացավ /հինգ ձայն/ գործատուների հետ ֆոկլուս խմբի քննարկումներից մեկում: Գրան կողմ գործատուները նշեցին.

- այն կյանքի իմաստ է արտահայտում, եթե այժմ չորոշես ապագատ, կնշանակի, որ չես կարող լավ ապրել ապագայում,
- ինձ դուր է գալիս, որ մեր հետ կապված որոշումներն ընդունում ենք ինքներս,
- խրախուղ է:

Խնայեք այժմ, վայելեք հետագայում

Միայն մեկական մասնակիցներ Գյումրիից, Իջևանից և մեկ աշխատող կողմ քվեարկեցին այս կարգախոսին: Գյուղաբնակ մասնակիցներից որևէ մեկին դուր չեկավ կարգախոսը, քանի որ ինչպես Հացիկ գյուղի մասնակիցներից մեկը նշեց. «Մենք խնայողություններ կատարեցինք, սակայն չկարողացանք վայելել այն, քանի որ կորցրեցինք այն: «Խնայողություններ» բառը տեղի չէ»: Գործատուներից որևէ մեկը կողմ չքվեարկեց կարգախոսին: Մասնակիցներից մեծ մասին դուր չեկավ «խնայեք» բառը:

Խնայողություններ կատարեք երիտասարդ և վայելեք տարեց հասակում

Կարգախոսին կողմ քվեարկեցին չորս մասնակիցներ Գյումրիից, իսկ Իջևանում որևէ մասնակից հավանություն չտվեց դրան: Երբ Գյումրիի մասնակիցներին հարցրեցին, թե ինչու՞ են հավանում այն, նրանք նշեցին.

- այն առնչվում է թեմային, այն արտահայտում է բարեփոխումները և դրական է,
- այն վայելելու, ազատության և հանգստի մասին է,
- այն ավելի դրականորեն կընդունվի երիտասարդների շրջանում, նրանք պետք է լավ վաստակեն, որպեսզի կարողանան խնայողություններ կատարել երիտասարդ տարիքում:

Գետահովիտի երկու մասնակիցներ հավանություն տվեցին կարգախոսին, իսկ Հացիկ գյուղից միայն մեկ մասնակից կողմ քվեարկեց դրան: Որոշ մասնակիցների դուր չեկավ «խնայողություններ» բառը:

Գործատուներից և աշխատողներից որևէ մեկը կողմ չքվեարկեց այս կարգախոսին: Ինչպես գործատուներից մեկը նշեց, «վայելել» և «ծեր» բառերը միասին չեն կարող օգտագործվել:

Խնայեք այժմ, ապրեք հետագայում

Այս կարգախոսն առավելագույն կողմ ձայներ ստացավ Գյումրիում (ինը ձայն): Գյումրիի մասնակիցները նշեցին, որ այս կարգախոսն արդար է, ավելի լավ է օգտագործել «ապրել», քան թե «վայելել» բառը: Մասնակիցները նշեցին.

- եթե անձը երեխաներ ունի և մտահոգված է նրանց ապագայով, ապա նա խնայողություններ կկատարի երեխաներին հետագայում օգնելու համար,
- այս կարգախոսը նշանակում է, որ մարդը ուրիշ որևէ մեկին չի վստահում,
- «ապրել» բառն ավելի իրատեսական է հնչում, քան «վայելել» բառը:

Կարգախոսը կողմ ձայներ չստացավ ո՛չ Իջևանում և ո՛չ էլ Գետահովիտ կամ Հացիկ գյուղերում: Ինձ դուր չի գալիս «ապրեք հետագայում» արտահայտությունը: Ի՞նչ է դա նշանակում, որ ես կմեռնե՞մ ապագայում: Հացիկ գյուղի մասնակիցներից մեկը վստահ չէր, թե ի՞նչ և ինչի՞ համար է պետք խնայել:

Աշխատողներից ոչ մեկը չքվեարկեց այս կարգախոսի օգտին: Դրա օգտին քվեարկեց միայն մեկ գործատու:

Ներդրեք այժմ, ապրեք հետագայում

Այս կարգախոսի օգտին միայն չորս մասնակից քվեարկեց Գյումրիում և երկու մասնակիցներ էլ Հացիկ գյուղում: Դրան կողմ քվեարկած մասնակիցները նշեցին.

- կարգախոսը ճիշտ ուղերձ է պարունակում,
- ինձ դուր է գալիս ներդրում կատարելու գաղափարը, քանի որ ինքս գործարար եմ,
- գործարարները դրական վերաբերմունք կունենան այս կարգախոսի նկատմամբ:

Կարգախոսին դեմ արտահայտված մասնակիցները նշեցին, որ այն ավելի բիզնես կողմնորոշում ունի և որևէ առնչություն չունի կենսաթոշակային բարեփոխումների հետ: Ինչպես մասնակիցներից մեկը բացատրեց, մտավախություն կա, որ մարդիկ կարող են այն ընդունել որպես ցանկացած բիզնեսում կատարվող ներդրումներ:

Ես խնայում եմ այժմ, որպեսզի ապրեմ հետագայում

Այս կարգախոսին կողմ քվեարկեցին չորս մասնակից: Գործատուներից և աշխատողներից որևէ մեկը կողմ չքվեարկեց դրա օգտին:

**Ֆոկուս խմբի մասնակիցների կողմից առաջարկված
կարգախոսներ**

Ստորև ներկայացված են ֆոկուս խմբի մասնակիցների կողմից առաջարկված կարգախոսներ.

Իջևանում տեղի ունեցած ֆոկուս խմբի քննարկում (քաղաքաբնակ).

- եկեք ապահովագրենք մեր ապագան
- եկեք խնայողություններ կատարենք արժանապատիվ ծերության համար:

Գյումրիում տեղի ունեցած ֆոկուս խմբի քննարկում (քաղաքաբնակ).

- սկսեք խնայողություններ կատարել բարեկեցիք ծերության համար,
- մտածեք Ձեր բարեկեցիք ծերության մասին,
- եղեք Ձեր բարեկեցիք ծերության տերը:

Գետահովիտ գյուղում տեղի ունեցած ֆոկուս խմբի քննարկում (գյուղաբնակ).

- ավելացրեք կենսաթոշակները,
- մեր ապագան մեր պետության ձեռքերում է,
- պետությունը կազմված է անհատներից:

Հացիկ գյուղում տեղի ունեցած ֆոկուս խմբի քննարկում (գյուղաբնակ).

- կենսաթոշակառուների ամբողջ աշխարհի, միացե՛ք:

Աշխատողների հետ տեղի ունեցած ֆոկուս խմբի քննարկումներ.

- Իմ ծերության ապահովությունն իմ ձեռքերում է,
- մտածեք Ձեր ապահով ծերության համար,
- իմ ապահով ծերությունն իմ ձեռքերում է,
- որոշեք այժմ՝ վաղը հուսալի ծերություն ունենալու համար,
- մենք պետք է մտածենք այսօրվանից սկսած (այս կարգախոսը պետք է ուղեկցվի գովազդային պաստառով և ներածական ուղերձով):

Գործատուների հետ տեղի ունեցած ֆոկուս խմբի քննարկումներ.

- յուրաքանչյուրը որոշում է իր ապագան,
- կենսաթոշակային բարեփոխումներ 2008/2009/2010: